ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ – Քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը – Հռոկվածում հեղինակը հետազոտում է «քաղաքականություն», «քաղաքական գործունեություն», «քաղաքական չեզոքություն» և այլ եզրույթների էվոլյուցիան, որոնք ներկայումս տեղիք են սովել լուրջ տարաձայնությունների և օրենսդրոքեն բավարար չափով որոշակիացված չեն: Անդրադարձ է կատարված նաև այդ եզրույթների բովանդակությանը, դրանց իրավական հիմքերին, որոնց արդյունքներով արվել են մի շարք եզրահանգումներ և առաջարկություններ՝ ուղղված հիշյալ հարցադրումների ամբողջական լուծմանը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև միջազգային փորձի, ինչպես նաև իրավական փաստերի տեսանկյունից գոյություն ունեցող (ստորջրյա) խութերով: Մասնավորապես, հետազոտության առարկա են դարձել այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են սահմանափակումների անհրաժեշտությանը, դրանց բովանդակությանը և կիրառման ճանապարհներին: Գիտական հետազոտության շրջանակներում հնարավորինս ամբողջական վերլուծվել են հիշյալ եզրույթների օրենսդրական հիմքերը, որոնք համադրվել են սահմանադրաիրավական կարգավորումների հետ, բացահայտվել են դրանցից յուրաքանչյուրի իրավական բովանդակությունը, կիրառման սահմանները, ինչպես նաև առանձնահատկությունները՝ պայմանավորված կոնկրետ սուբյեկտի կարգավիճակով: Հետզոտության նպատակն է լուծել երկու հիմնախնդիր՝ ա) առաջադրել հնարավորինս գործնական դիրքորոշումներ օրենսդրական բացերի լրացման և հաղթահարման վերաբերյալ, բ) հատուկ ուրվագծել հայրենական օրենսդրությամբ ամրագրված դրույթների բարելավման ուղիները:

Բանալի բառեր – քաղաքականություն, քաղաքական գործունեություն, քաղաքական զսպվածություն, քաղաքական չեզոքություն, ապաքաղաքականություն, կուսակցություն, դատական իշխանություն, հանրապետության նախագահ

ГЕВОРГ ДАНИЕЛЯН – Запрет на занятие политической деятельностью. – В статье автором исследуется эволюция понятия «политическая деятельность».

ность» и смежных терминов («политика», «политическая деятельность», «политический нейтралитет» и пр.), вызывающих сегодня серьезные разногласия и недостаточно конкретизированных на законодательном уровне, а также содержание их правовой базы, представлен целый ряд заключений и предложений, направленных на комплексное решение указанных вопросов.

Актуальность темы продиктована также некоторыми «подводными камнями» в области международного опыта и соответствующих правовых документов с позиции указанных правовых понятий, в частности, предметом исследования в них стали вопросы о том, по каким соображениям должны предусматриваться ограничения, для чего таковые нужны, в то время как вопросы о том, какие конкретные составляющие содержатся в указанных ограничениях, рассматриваются в недостаточной мере.

В рамках научного исследования по возможности в целостной форме проанализированы законодательные основы названных терминов, они сопоставлены с конституционным регулированием, раскрыто правовое содержание каждого из них, границы применения, особенности законодательных ограничений, обусловленных статусом субъектов и т.д.

Пожалуй, данное исследование направлено на решение двух проблем: а) предложить практически возможные и приемлемые решения в условиях явных законодательных пробелов в отношении указанных терминов; б) четко начертить базовые направления совершенствования отечественного законодательства.

Ключевые слова: *политика, политическая деятельность, политическая сдержанность, политический нейтралитет, деполитизация, партия, судебная власть, Президент Республики*

ԻՐԱՎՈՒՆՔ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏՅՈՄ ՍԵՂՐԱԿՅԱՆ

Երկու բնագոյ է շարժում ժողովրդավարական ռեժիմը՝
անվտանգության բնագոյը և ազատության բնագոյը:
Աբբա Էվեն (1915-2002)
Բարայեյի արտգործնախարար

1990 թվականին ընդունվեց Հայաստանի անկախության հռչակագիրը, որով հայտարարվեց անկախ պետականության հաստատման «գործընթացի սկիզբը»¹: Հռչակագիրը ոչ միայն ամրագրեց, որ պետությունն ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից, այլև նախանշեց ազգային անվտանգության հիմնարար արժեքները²: Այդ ժամանակահատվածում հայ ժողովուրդը կռվում էր իր ազատության և անվտանգության համար. կռվում էր բառի բուն իմաստով: Այդ կռիվը չի ավարտվել առ այսօր. Հայաստանի անկախ պետության անվտանգությանը շարունակում են սպառնալ ներքին ու արտաքին գործոններ: Եվ անվտանգության համար երեք տասնամյակ շարունակվող պայքարը, բնականաբար, որոշակի գին է վճարում. այդ գինը նաև ազատության մասամբ սահմանափակումն է ու ժողովրդավարության արժեքների որոշ չափով վտանգումը:

Անվտանգության հիմնարար շահերի և ժողովրդավարության հիմնարար արժեքների միջև կա *մեծ բախում*, որը նկատվում է հանրային կյանքի բոլոր ոլորտներում: Այս հողվածի նպատակն է ուսումնասիրել տվյալ բախման ենթադրական ու իրական հետևանքները, ինչպես նաև հասկանալ, թե արդյոք հնարավոր է գտնել կենսական այդ շահերի (արժեքների) անհրաժեշտ հավասարակշռումը:

Բանալի բառեր – *իրավունք, ազատություն, ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, անվտանգություն, ազգային անվտանգություն, պետության պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, իրավական հավասարակշռում*

¹ «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրն ընդունվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1990 թ. օգոստոսի 23-ին: Իսկ 1991 թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը, հիմք ընդունելով 1991 թ. սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները, «հռչակ[եց] Հայաստանի Հանրապետության անկախ պետություն» («Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման մասին» 23.09.1991 թ. թիվ՝ Ն-0393-I որոշում):

² Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Ս. Մեղրակյան**, Ազգային անվտանգության իրավական ապահովման հեռանկարները Հայաստանի Երրորդ Հանրապետությունում // «Հայկական բանակ», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ռազմագիտական հանդես, № 1-2 (67-68), 2011, Եր., էջ 152-162:

Իրավունք և անվտանգություն. ինչպես են հարաբերակցվում այս երևույթները: Առաջին հերթին կարևոր է պարզել, թե որն է այն «անվտանգությունը», որը պետք է ապահովեն պետությունն ու իրավունքը: Եվ քանի որ պետք է որոշվի այն սահմանը, որի ներքո ժողովրդավարական երկրում հավասարակշռվելու են ազատությունն ու անվտանգությունը, կարևոր է նաև պարզել, թե ինչպես է այդ անվտանգությունը հարաբերակցվում (նույնականացվում) իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունները կարգավորող հիմնական գործիքի հետ:

«Անվտանգություն» եզրույթը (ոչ թե պարզապես տերմինի, այլ հասկացության կամ կոնցեպտի իմաստով) ընկալվում է երկու մոտեցմամբ: Մի դեպքում դրա իմաստը նեղ է, մյուս դեպքում այն ներառում է լայն շրջանակ առանց կոնկրետ սահմանների: Նեղ ընկալմամբ «անվտանգություն» այն ամենն է, ինչ հնարավոր է դարձնում արտաքին սպառնալիքից պետության պաշտպանությունը: Այն, որպես կանոն, ներառում է ռազմական (պաշտպանական) բնույթի գործիքները, այդ թվում՝ այն միջոցները, որոնք հնարավոր են դարձնում հակառակորդի նկատմամբ հաղթանակը, զինված հարձակումները կանխելը, օտարերկրյա պետությունների ոտնձգություններին հակազդելը և այլն (ընդհուպ ահաբեկչության կամ լրտեսության դեմ պայքար): *Լայն* ընկալմամբ «անվտանգության» շրջանակը չի սահմանափակվում միայն ռազմական բաղադրիչով: Հակառակորդի նկատմամբ հաղթանակը հնարավոր դարձնող միջոցները, ըստ այս մոտեցման, ներառում են ոչ միայն ռազմականը, այլ նաև բոլոր նրանք, որոնք ձեռնարկվում են ներքին ու արտաքին քաղաքականության շրջանակներում³ (այսինքն՝ ցանկացած միջոց, որը կարող է չեզոքացնել անհատի, հասարակության և պետության կենսական շահերի դեմ սպառնալիքը): Լայն ընկալմամբ, փաստորեն, անվտանգությունը պարունակում է նաև մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների տարրը:

Անվտանգության լայն ընկալումը որդեգրվել է նաև Հայաստանում, որը հստակ ընդգծված է ներքին ու արտաքին մի քանի պաշտոնական ուղերձներում (մեսիջներում)⁴: Լայն ընկալմամբ՝ անվտան-

³ Այս մասին տե՛ս **Бениамин Нойбергер**, Национальная безопасность и демократия – конфликты и дилеммы: Израиль в сравнительной перспективе // В эл. кн.: Национальная безопасность и демократия в Израиле, т. I, гл. I, <http://online-books.openu.ac.il/russian/ democracy-and-national-security/volume1/article1.html>

⁴ 2007 թ. փետրվարին Հանրապետության Նախագահի հրամանագրով հաստատված Ազգային անվտանգության ռազմավարությամբ Հայաստանը ներկայանում է որպես անվտանգություն «արտահանող» երկիր, բացի դրանից ընդգծվում է, որ Հայաստանում անվտանգության շահերն առաջնահերթություն են, և անվտանգություն ապահովելը չի սահմանափակվում միայն ռազմական անվտանգության բաղադրիչով: Ավելին, համամարդկային արժեքների՝ *մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության և իրավական պետության* հաստատման սկզբունքներն ընդունվում են որպես «պետական գաղափարախոսության անբաժանելի մաս»: Դրա հետ մեկտեղ՝ 2020 թ. հուլիսին Անվտանգության խորհրդի նիստում ներկայացված նոր ռազմավարությունն էլ Հայաստանի հիմնարար ազգային շահերից է դիտարկում *ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ապահովումը*:

գության ապահովումը պայմանավորված է նաև իրավունքի գերակայության երաշխավորմամբ՝ որպես հիմնարար ազգային շահի բաղադրիչ: Եվ քանի որ «անվտանգությունը» Հայաստանի դեպքում պետք է ընկալել *լայն* իմաստով, պետության միջոցներն էլ, ուրեմն, կարող են լինել բազմաշերտ: Այս տրամաբանությամբ՝ անձի ու հասարակության ազատությունը կարող է սահմանափակվել տարբեր ծավալներով՝ պայմանավորված կոնկրետ պահին անվտանգության այս կամ այն բաղադրիչի առաջնահերթությամբ:

Հատկանշական է, որ լայն ընկալմամբ «անվտանգության» օբյեկտը եռատարր է, այսինքն՝ այն արժեքը, որը չպաշտպանելը հղի է վտագով, կազմում են և՛ *անհատն է* (նրա իրավունքներն ու ազատությունները), և՛ *հասարակությունն է* (նրանում առկա նյութական և հոգևոր արժեքները), և՛ *պետությունը* (ի թիվս այլնի՝ անկախությունն ու սահմանադրական կարգը): Անվտանգության ապահովումը բխում է այդ երեք սուբյեկտների շահերից, հետևաբար՝ երեքն էլ միաժամանակ (և առանձին վերցրած) ձգտում են անվտանգության: Ու քանի որ ձգտում են անվտանգության, երեքն էլ ցանկանում են ապահովել այդ վիճակը՝ անվտանգության օբյեկտից միաժամանակ վերածվելով անվտանգության սուբյեկտի:

Իրավունքի և անվտանգության հարաբերակցության մասին հրապարակումներից մեկում⁵ քննարկել ենք միասնական իրավաբանական որոշ հարցեր և առաջարկել մոտեցում (պայմանականորեն անվանելով *սեկյուրիտար*, լատիներեն՝ *securitas* («անվտանգություն») բառից), որի շրջանակում առավելապես փոխկապակցված են զարգանում իրավունքը և անվտանգությունը: Այս մոտեցմամբ՝ իրավունքն ու անվտանգությունը մշտական հարաբերակցության մեջ են, դրանք փոխկապակցված են, փոխլրացնող, ընդհանրության մեջ նույնիսկ նույնական են (բազմատարր, բազմաշերտ ու բազմանկյուն): Ե՛վ իրավունքը, և՛ անվտանգությունը պաշտպանում են անհատի, հասարակության ու պետության շահերը, երաշխավորում են նրանց զարգացումը. ընդ որում, եթե անվտանգությունն ապահովում է զարգացումը, ապա իրավունքը կարգավորում է այդ զարգացումը: Դրանք արժեքներ են, որոնց պահպանումն ու պաշտպանությունը յուրաքանչյուր անհատի, ողջ հասարակության և ընդհանրապես պետության առաջնային պարտավորություններից են, մանավանդ որ այն բխում է յուրաքանչյուրի և բոլորի շահերից: Իրավունքը պայմանավորված է անվտանգության անհրաժեշտությամբ, իսկ անվտանգությունը՝ իրավունքի ուժով: Հետևաբար, իրավունքը չի կարող զարգանալ, եթե չկա անվտանգություն, իսկ անվտանգության ապահովումը չի կարող լիարժեք երաշխավորվել իրավունքից դուրս:

⁵ Տե՛ս **Ա. Ս. Մեդրակյան**, Իրավունքի և անվտանգության մասին // Հասարակագիտական միտքը արդի ժամանակաշրջանում / ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, Եր., Եվրոպրինտ, 2012, էջ 211-221:

Այս պայմաններում «անհատի շահ – հասարակության շահ – պետության շահ» եռամիասնության կապը «իրավունք – անվտանգություն» երկմիասնության հետ ուղղակի է և ամուր, իսկ նման կապն էլ պայմանավորում է անհատի, հասարակության ու պետության զարգացումը: Ավելին, այդ կապը էլ ավելի է ամրանում ժողովրդավարական ռեժիմներում:

Անվտանգություն և ազատություն. որտեղ են բախվում այս արժեքները: «Նրանք, ովքեր պատրաստ են հրաժարվել հիմնական ազատությունից մի փոքր ժամանակավոր անվտանգություն ձեռք բերելու համար, արժանի չեն ո՛չ ազատության, ո՛չ անվտանգության»։ ԱՄՆ հիմնադիր հայրերից Բենջամին Ֆրանկլինի այս խոսքերը մեջբերում են գրեթե բոլորը, ովքեր ինչ-որ կերպ հետաքրքրված են անվտանգության և ժողովրդավարության «դիլեմայով»⁶: Բայց արդյո՞ք նրանցից շատերն ունեն որևէ պատկերացում, թե որտեղից են գալիս այս խոսքերը, և ինչ է դրանց հեղինակը նկատի ունեցել իր բառերի արանքում:

Առաջին անգամ այս միտքը տեղ է գտել Ֆրանկլինի նամակներից մեկում, որը 1755 թվականին (ենթադրաբար Փենսիլվանիայի օրենսդրի Ասամբլեայի անունից) գրվել է գաղութային նահանգապետին: Ասամբլեան մտադիր էր հարկել Փենսիլվանիան հեռակա կառավարող Փենների ընտանիքի հողերը և այդ միջոցներով ապահովել սահմանների անվտանգությունը ֆրանսիացիների ու հնդկացիների հարձակումներից: Դրան հակադրվում է նահանգապետը, ով պաշտպանում էր իրեն նշանակած ընտանիքի շահերը՝ վետո դնելով Ասամբլեայի տվյալ որոշման վրա: Նամակում, ըստ էության, Ֆրանկլինի «հրաժարվել հիմնական ազատությունից» (*“give up essential Liberty”*) արտահայտությունը վերաբերում էր ոչ թե քաղաքացիական ազատությանը (մարդու իրավունքներին) ժամանակակից ընկալմամբ, այլ օրենսդրի (Ասամբլեայի) հնարավորությանը՝ ինքնակառավարելու ի շահ հավաքական անվտանգության: Ավելին՝ «մի փոքր ժամանակավոր անվտանգություն ձեռք բերելու համար» (*“purchase a little temporary Safety”*) արտահայտության մեջ էլ «ձեռք բերելն» ուներ ուղղակի նշանակություն՝ հենց «գնել» (*“purchase”*) բառի իմաստով: Եվ, փաստորեն, Ֆրանկլինն իր նամակով վիճարկում էր նահանգապետի առաջադրած ընտրությունը, որ Ասամբլեան պիտի կատարեր սահմանների պաշտպանության ապահովման համար անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու հնարավորության և ինքնակառավարման իրավունքի միջև: Ընդհանրության մեջ, փաստորեն, Փենսիլվանիայի բնակչության ազատության և անվտանգության շահերը, ըստ Ֆրանկլինի, միմյանց փոխլրացնող էին: Հետևա-

⁶ Բենջամին Ֆրանկլինի հայտնի այս խոսքերը (*“Those who would give up essential Liberty, to purchase a little temporary Safety, deserve neither Liberty nor Safety”*) խորհրդանշական են դարձել՝ նկարագրելու ազատության ու անվտանգության (ապահովության) միջև հավասարակշռումը:

բար՝ նա խոսել է ոչ թե անհատի ազատության և պետության իշխանության հարաբերակցության մասին կամ ոչ թե ազատությունը գերադասել է անվտանգությունից (ինչպես շատերը ենթադրում են), այլ խոսել է անվտանգության ապահովման գործում արդյունավետ կառավարման մասին⁷:

Իրենց անվտանգությունն ապահովելու խնդիր ունեն բոլոր պետությունները՝ անկախ ստեղծման ժամկետից և անկախ կառավարող պետական ռեժիմի բնույթից⁸: Այդուհանդերձ, ժողովրդավարական պետություններում անվտանգության հարցը միշտ ավելի սուր է դրված, քանի որ այստեղ բխվում են ժողովրդավարության հիմնարար արժեքներն ու պետության պաշտպանունակությանն ուղղված միջոցները: Այլ խոսքերով՝ անվտանգության և ազատության միջև սահմանը որոշելու խնդիրը շատ ավելի զգայուն է արտահայտվում ժողովրդավարական պետություններում, քանի որ դրանցում, անվտանգությունից բացի, թանկ է նաև ժողովրդավարության ձեռքբերումները չվտանգելու գաղափարը: Իհարկե, այնպես չէ, որ ժողովրդավարական բոլոր պետությունները, անկախ իրենց պատմական, մշակութային, քաղաքական կամ իրավական առանձնահատկություններից, նույնն են: Այն ժողովրդավարությունները, որտեղ պատերազմի վտանգը մշտատև (պերմանենտ) է, իրական ու ամենօրյա, որտեղ ազգային շահի դեմ սպառնալիքներն առավել շոշափելի են ու զգալի, իսկ անվտանգությունը կենսական է կամ ունի գոյաբանական (էկզիստենցիալ) նշանակություն, քիչ ընդհանրություններ ունեն այն ժողովրդավարությունների հետ, որտեղ ազգի պահպանման խնդիր ըստ էության գոյություն չունի: Պատերազմի (ենթադրական կամ իրական) վտանգի առաջ կանգնած պետությունները բնականաբար ստիպված են անվտանգության ապահովումը դիտարկել որպես «բարձրագույն նպատակ» և *անհրաժեշտ բոլոր միջոցներով* հասնել այդ նպատակին, նույնիսկ եթե դա պետք է արվի մարդու իրավունքների խախտման ճանապարհով⁹: Ու այնպես, ինչպես 1945 թվականին ՄԱԿ-ի հիմնադիրները պատճառ ունեին կայունությունը գերադասելու արդարությունից¹⁰, այդ ժողովրդավարու-

⁷ Տե՛ս **Benjamin Wittes**, What Ben Franklin Really Said. Lawfare, July 15, 2011, <https://www.lawfareblog.com/what-ben-franklin-really-said>

⁸ Դեռևս 370 տարի առաջ անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբսը «*Լևիաթանում*» դիտարկել է, որ «[պ]ետության նպատակը գլխավորապես անվտանգություն ապահովելն է» (**Томас Гоббс**, *Левифан, или Материя, форма и власть государства церковного и гражданского*. Изд-во АСТ, М., 2021, с. 163): Պետության և իրավունքի տեսությունն այսօր էլ երկրի անվտանգության ապահովումը կամ պաշտպանությունը դիտարկում է որպես առաջնահերթ (արտաքին) գործառնություն ցանկացած պետության համար (տե՛ս **Ս. Գ. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն—1 (դասախոսություն): ԵՊՀ, Եր., 2010, էջ 103, **Нерсесян В. С.** *Общая теория государства и права*. Изд-во НОРМА, М., 2010, էջ 260, **Марченко М. Н.** *Проблемы общей теории государства и права* (Государство). Изд-во ПРОСПЕКТ, М., 2008, էջ 269 և այլն):

⁹ Տե՛ս նաև **Бениамин Нойбергер**, նշվ. աշխ.:

¹⁰ Տե՛ս **Michael J. Glennon**, *Limits of Law, Prerogatives of Power: Interventionism after Kosovo*.

յուններն էլ ունեն հասկանալի պատճառներ ավելի բարձր գնահատելու անվտանգությունը, քան ազատությունը:

Հայ ժողովրդի կյանքում էլ պատճառները քիչ չեն: Ցեղասպանությունը, էթնիկ ջարդերը, գաղթը բնականաբար թողել են իրենց դրոշմը ազգային մտածելակերպի վրա: Վտանգի տևական ընկալումը ծանր ազդեցություն է գործել հայերի ինքնագիտակցության ու աշխարհընկալման վրա: Այն շարունակվում է նաև մեր օրերում: Տարբեր ձևաչափերով հարևան Թուրքիայից եկող վտանգները, Ադրբեջանի հայատյաց պետական քաղաքականության սպառնալիքները խորացնում են ազգի հակասական վերաբերմունքն անվտանգության և ազատության նկատմամբ: Սա բնական զգացում է, որը, սակայն, չպետք է հասնի վախի ծայրահեղ աստիճանի՝ դրանով իսկ խեղաթուրելով այդ արժեքների նկատմամբ ընկալումները: Չպետք է թույլ տալ, որ «մի փոքր» անվտանգություն ձեռք բերելու համար հեշտությամբ անտեսվի ազատության որևէ շահ կամ հանդուրժվի նվաստացման որևէ դրսևորում (ինչպիսիք, օրինակ, նկատելի են Հայաստանի առանձին համայնքներում սահմանային խնդիրներին առնչվող մի քանի դեպքերում):

Ժողովրդավարական պետություններն անընդհատ կանգնած են լինում «ազատություն – անվտանգություն» երկատման (դիխոտոմիայի) առաջ և փորձում են հասկանալ, թե որ դեպքում են անվտանգության ապահովման համար քայլերը խախտում ժողովրդավարության ղեկավար նորմերը, և որ դեպքում է, որ դրանց խախտումը կարելի է համարել լեգիտիմ ու արդարացված: Նաև փորձում են գտնել օպտիմալ այն հարաբերակցությունը (իրավական հավասարակշռումը), երբ մի կողմից օրենքով սահմանված կանոններով ապահովվելու է «ազգային» անվտանգությունը (անհատի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանվածության վիճակը), իսկ մյուս կողմից պաշտպանվելու է ազգի ազատությունը (ու ժողովրդավարությունը):

Բայց արդյո՞ք անվտանգությունը կարելի է ապահովել ամեն գնով: Եթե պատասխանենք մեկ բառով, ապա՝ ո՛չ: Բայց կարևոր է պարզաբանել, թե ինչո՞ւ ո՛չ:

Որքանով են անվտանգության հիմնարար շահերն առաջնահերթ:

1991 թվականին Հայաստանը, պաշտոնապես անկախ պետություն հռչակելուց բացի, նաև նպատակ էր դրել «ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ»․ դա, ենթադրաբար, պայմանավորված էր նաև Անկախության հռչակագրով, որն արդեն ընդունվել էր, ի թիվս այլնի, «ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից»: Արցախյան ազատամարտից անմիջապես հետո ընդունված

Մահմանադրությամբ էլ հստակ ընդգծվել էր, որ «հայ ժողովուրդը» փաստաթուղթն ընդունում է՝ «ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին»:

Հայաստանի համար անվտանգության ապահովումը, հետևաբար, թեև գլխավոր առաջնահերթություն է, բայց երբևէ ինքնանպատակ չէ: Եվ այն չպետք է դառնա այդպիսին, որովհետև երկրի ազատության ու անվտանգության հետ ոչ պակաս առաջնահերթ արժեք է հենց իրավունքի գերակայությամբ ուղեկցվող ժողովրդավարությունը, որի հիմքում անհատի ազատություններն են:

Այս իմաստով անվտանգության շահերը *հարաբերական և ոչ թե բացարձակ* առաջնահերթություններ են: Անվտանգության շահերն ունեն իրենց սահմանը, և, ինչպես արդարացիորեն ընդգծել է իսրայելցի գիտնական Բցիակ Ջամիրը, «[այդ սահմանն] անսասան չէ. այն կարող է փոփոխվել՝ կախված դրանց հակադրվող շահերի կարևորությունից կամ դրանց սպառնացող վնասի աստիճանից, մինչև որ այդ հակադիր շահերի միջև ձեռք կրերվի համապատասխան հավասարակշռում»¹¹:

Նման հավասարակշռում, սակայն, դժվար է ձեռք բերվում հատկապես արտակարգ իրավիճակներում (առավել ևս, օրինակ, Հայաստանի, Արցախի կամ Իսրայելի նման պետություններում, որտեղ պատերազմի իրական վտանգի սպառնալիքներն առավել շոշափելի են ու զգալի): Բնականաբար, ճգնաժամերի դեպքում մեծանում է ռազմական կառույցների դերը, մեծանում է նրանց ազդեցությունը, իսկ որոշում կայացնող առանձին զինվորական պաշտոնյաներ (օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներից ելնելով) դժվարանում են համադրել ազատությունը կամ ժողովրդավարությունը անվտանգության շահերին: Նրանք չեն թաքցնում, որ բանակի (կամ անվտանգության մյուս կառույցների) համար ժողովրդավարական կանոնների պահպանումը, իրենց կարծիքով, *շոսալություն է*: Ուստի արտակարգ իրավիճակներում անվտանգության ապահովման ճանապարհին ձեռնարկված ցանկացած միջոց, ըստ պնդման, *արդարացված է* ու բխում է «բարձրագույն նպատակից»:

Եվ հաճախ իշխանություններն օգտագործում են նման իրավիճակները որպես հարմար առիթ (և պատճառաբանություն)՝ սահմանափակելու մարդու ազատությունները: Երբեմն էլ առանձին պաշտոնյաներ, հատկապես ռազմաքաղաքական ղեկավար կազմից, ուղիղ ցույց են տալիս «անվտանգության շահերի» հանդեպ իրենց բացարձակ նախապատվությունը: Սա, որպես կանոն, խնդրի ցուցիչ է, ազդակ այն բանի, որ ժողովրդավարության արժեքների համար վրա են հասնում (կամ հասնելու) իրական և ոչ թե ենթադրական հետևանքներ, որոնք

¹¹ **Ицхак Замир**, Права человека и безопасность страны // В эл. кн.: Национальная безопасность и демократия в Израиле, т. I, гл. III, <http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume1/article8.html>.

կարող են ուղիղ վտանգել ընդհանրապես հանրության շահերը: Պետք է մշտապես նկատի ունենալ, որ անվտանգության շահերը մեծարող հայտարարություններից մինչև ժողովրդավարության արժեքների նսեմացում մեկ քայլից էլ փոքր է: Վերջնարդյունքում դա հանգեցնելու է ծայրահեղ մոտեցումների՝ «առանց անհրաժեշտության և անարդարացիորեն կասկածի տակ դնելով մյուս արժեքները, ներառյալ՝ օրենքի իշխանությունն ու մարդու իրավունքները»¹²:

Հետևաբար, պետք է խելամտորեն հավասարակշռել անվտանգության հիմնարար շահերը և ժողովրդավարության հիմնարար արժեքները: Իսկ այդ գործում դժվար է գերազնահատել իրավունքի՝ որպես ինքնատիպ գործիքի (ռեգուլյատորի) դերը:

Ինչպես ապահովել անվտանգության շահերի և ժողովրդավարության արժեքների հավասարակշռումը: Եթե դոկտոր Հենրի Քիսինգերի խոսքերով 1812 թվականը «մատնանշեց այն պահը, երբ պարզ դարձավ, որ Եվրոպան չէր կազմակերպվելու բռնի ուժով»¹³, ապա 2001 թվականը («Սեպտեմբերի 11») մատնանշեց այն պահը, երբ պարզ դարձավ, որ ժողովրդավարությունների տեսքն այլևս չի լինելու նույնը. նրանք չեն խուսափելու գործել առանց բռնի ուժի: Կարելի է ենթադրել, որ 2001-ից հետո միջազգային ահաբեկչության իրական վտանգի պայմաններում աշխարհն անցնում է հետժողովրդավարության կամ, բրիտանացի գիտնականներից մեկի բնորոշմամբ, «նեոժողովրդավարության» դարաշրջանով, երբ առավելապես գործ ենք ունենալու «ժողովրդավարության զգեստ» հագած կառավարման ռեժիմների հետ¹⁴: Ինչո՞ւ:

Նախ, որովհետև «Սեպտեմբերի 11-ը» պատմականորեն «շրջադարձային կետ» դարձավ ընդհանրապես միջազգային հարաբերություններում գործող «խաղի կանոնների» փոփոխման տեսանկյունից¹⁵, ինչը հիմք տվեց վերանայելու նաև ազատության ու անվտանգության ապահովման մեթոդների (կոշտ մեթոդների) ընտրության կանոնները: Բացի դրանից, դրան նպաստեց «վախի մշակույթը», ինչը, ֆրանսիացի հեղինակավոր քաղաքագետ Դոմինիկ Մոյիզիի հիմնավորմամբ, «նվազեցնում է որակական բացը, որ ժամանակին գոյություն ունեւ ժողովր-

¹² Նույն տեղում:

¹³ **Henry Kissinger**, *A World Restored: Metternich, Castlereagh and the Problem of Peace (1812-22)*. EPBM, 2013, p. 4-5.

¹⁴ Տե՛ս **Conor Gearty**, *Liberty and Security*. POLITY, 2013, էջ 4-5, 55:

¹⁵ Արևմուտքում «Սեպտեմբերի 11-ը» (երբ ահաբեկչական մի քանի հարձակումներ եղան ԱՄՆ-ի դեմ՝ իր իսկ տարածքում) տեսնում էին որպես «պատմական շրջադարձային կետ»: Միացյալ Նահանգների 43-րդ նախագահ Ջորջ Բուշի ոճով՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեերը 2005 թ. հուլիսին Լոնդոնում տեղի ունեցած ահաբեկչական ակտերից հետո անվտանգության մասին խոսելիս կիրառում էր նույն բառապաշարը. «Թող ոչ ոք կասկած չունենա. խաղի կանոնները փոխվում են»: Թե՛ Բուշը, թե՛ Բլեերը հստակ ընդգծում էին, որ իրենց պայքարում «նպատակն արդարագնում է միջոցները» (**Dominic Raab**, *Liberty vs. Security*, *The New York Times*, February 7, 2009, <https://www.nytimes.com/2009/01/27/opinion/27iht-edraab.1.19713174.html>):

դավարական և հակաժողովրդավարական ռեժիմների միջև, քանի որ վախը երկրներին դրդում է խախտելու իրավունքի գերակայության նկատմամբ խիստ հարգանքի վրա հիմնված սեփական բարոյականության սկզբունքները»¹⁶: «Վախի մշակույթը» նաև հնարավոր դարձրեց, որ մարդիկ նույնպես վերանայեն իրենց ընկալումներն անվտանգության և ժողովրդավարության (ու դրանց պահպանման մեթոդների) վերաբերյալ: Ո՞վ կպատկերացներ, որ զարգացած ժողովրդավարություններում տեղ կգտնեն անվտանգության ագրեսիվ մեթոդներ. օրինակ՝ ԱՄՆ-ում ահաբեկչության մեջ մեղադրվող ազատագրկվածները դաժանորեն կխոշտանգվեն, նույնիսկ կարգելվի Կարմիր խաչի միջազգային կոմիտեի մուտքը նրանց պահման վայր¹⁷, մարդիկ կազատագրվեն առանց դատավարության¹⁸, գաղտնի կհավաքագրվեն միլիոնավոր մարդկանց անձնական տվյալներ¹⁹ և այլն: Այս տրամաբանությունն այսօր էլ է նկատվում: Դրա ապացույցներից է արդեն շուրջ երկու տարի շարունակվող գլոբալ առողջապահական ճգնաժամի²⁰ ընթացքում ամենախիստ սահմանափակումներն ամբողջ աշխարհում, որի հանդեպ մարդիկ, զարմանալիորեն, հաճախ անհամաչափ հանդուրժող են:

Պարզվեց, որ դա հնարավոր է: Հնարավոր է, որովհետև, մի կողմից, պետությունները փաստացի վերափոխել են իրենց առաջնահերթությունները, իսկ մյուս կողմից էլ մարդիկ առանց մեծ դժվարությունների ու «անվտանգության բնագոյով» հրաժարվում են իրենց ազատության զգալի ծավալից: Լավ է, թե վատ, բայց աշխարհը սկսել է այլ աչքերով նայել ժողովրդավարության արժեքներին՝ ի հաշիվ անվտանգության շահերի գերակայության:

Բոլորն են հասկանում, որ ազատության «անհրաժեշտ տարր» է անվտանգությունը²¹, որ ազատությունը և անվտանգությունը մեկը մյուսի համար «անհրաժեշտ նախապայման»²² են, երբ անվտանգութ-

¹⁶ **Dominique Moisi**, *The Geopolitics of Emotion: How Cultures of Fear, Humiliation, and Hope Are Reshaping the World*. DOUBLEDAY, 2009, p. 94.

¹⁷ Տե՛ս **Michael J. Glennon**, *National Security and Double Government*. OXFORD, 2016, էջ 1-2:

¹⁸ Տե՛ս **Eric Posner, Adrian Vermeule**, *Terror in the Balance: Security, Liberty, and the Courts*. OXFORD, 2007, էջ 3:

¹⁹ Տե՛ս **Glenn Greenwald**, *NSA Collecting Phone Records of Millions of Verizon Customers Daily*. *The Guardian*, 6 June 2013, <https://www.theguardian.com/world/2013/jun/06/nsa-phone-records-verizon-court-order>

²⁰ Խոսքը COVID-19 համավարակի մասին է, որը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի բնորոշմամբ՝ «մեր ժամանակաշրջանի ամենամեծ ճգնաժամն է» (Secretary-General's video message for the World Health Summit, 25 October 2020, <https://www.un.org/sg/en/content/sg/statement/2020-10-25/secretary-generals-video-message-for-the-world-health-summit>):

²¹ Տե՛ս **Peter Moskos**, *Balancing Security and Liberty*. *The Washington Post*, August 2, 2004, <https://www.washingtonpost.com/archive/opinions/2004/08/02/balancing-security-and-liberty/7cf78c25-e089-4d8f-a296-4c8c78928c2b>

²² Տե՛ս **Benjamin Wittes**, *Liberty and Security: Hostile Allies*, Hoover Institution at Stanford University, November 10, 2011, <https://www.hoover.org/research/liberty-and-security-hostile-allies>:

յան բացակայությունը երաշխավորում է ազատության դեֆիցիտը: Եվ շատերն են գիտակցում, որ կյանքն առանց անվտանգության կորցնում է իր արժեքը, որքան էլ մեծ լինի ազատ ապրելու կամ ազատ գործելու ձգտումը: Եթե ապահովված չէ կյանքին սպառնացող վտանգների հակազդումը, մյուս բոլոր կենսական շահերը ցանկացած ոլորտում (ասենք՝ տնտեսության, կրթության, առողջապահության, բնապահպանության, նույնիսկ իրավունքի ոլորտում) կորցնում են իրենց բուն իմաստը: Այս դիտանկյունից համընդհանուր մոտեցումը, թե «ազգային անվտանգությանն առնչվող հարցերը մյուս շահերից կարևոր են»²³, թերևս արդարացված է:

Բայց կարևոր է, որ անվտանգությունն ապահովվի լեգիտիմության հովանոցի ներքո: Նախ՝ պետք է հստակ լինի, որ խոսքն *իրական* ճգնաժի մասին է, որտեղ անվտանգության երաշխավորումն այլընտրանք չունի: Երկրորդ՝ պետք է լինի վստահություն, որ անվտանգության քողի տակ իշխանությունները չեն իրացնում իրենց քաղաքական *թաքուն* ծրագրերը: Եվ երրորդ՝ ամեն ինչ պետք է արվի Սահմանադրության և օրենքի ուժի առաջնահերթությամբ՝ *իրավունքի գերակայության* տանիքի ներքո և ապահովելով ժողովրդավարության հիմնարար արժեքների ու անվտանգության հիմնարար շահերի ողջամիտ *իրավական հավասարակշռում (equilibrium)*:

Այդպես հնարավոր է իրապես հավասարակշռել անվտանգության շահերի և ժողովրդավարության արժեքների միջև հարաբերակցությունը: Այդպես հնարավոր է ապահովել բարդ գոյատևող ներդաշնակությունը իրավունքի և անվտանգության, անվտանգության և ազատության միջև՝ չնսեմացնելով ժողովրդավարության հիմնարար արժեքները:

Իրավագիտության տեսանկյունից խնդրի լուծումը հստակ է՝ անվտանգության շահերը *չպետք է* ապահովվեն օրենքից դուրս: Անվտանգության շահերը «ենթակա են օրենքին», իսկ անվտանգության գիտակցումն օրենքից բարձր դասելը «չափազանց վտանգավոր է»²⁴, քանի որ իրավունքի նպատակների հակասում է, երբ իշխանությունն իրեն օրենքից առավել է համարում (անկախ նրանից, թե որքան արդար է նրա ցանկությունը): Չի կարելի գործել հանուն անվտանգության և դրանով իսկ «սպանել» օրենքը՝ ոտնահարելով մարդու իրավունքներն ու իրավունքի գերակայությունը: Նման քայլերը խախտում են կենսական շահերի միջև հավասարակշռումը: Չէ՛ որ մարդու իրավունքներն ու իրավունքի գերակայությունը նույնպես ազգային շահեր են:

Անվտանգությունը չի հակադրվում ժողովրդավարությանը. դրանք գուզահեռ զարգացող և միմյանց փոխլրացնող արժեքներ են: Եվ պետք է ամեն գնով ապահովել թե՛ մեկը, թե՛ մյուսը՝ հատկապես որ հնարա-

²³ **Ицхак Замир**, նշվ. աշխ.:

²⁴ Տե՛ս համապատասխանաբար՝ **Ицхак Замир**, նշվ. աշխ., **Моше Негби**, Кризис власти закона // В эл. кн.: Национальная безопасность и демократия в Израиле, т. I, гл. III, <http://online-books.openu.ac.il/russian/democracy-and-national-security/volume1/article10.html>

վոր է գտնել անհրաժեշտ «ոսկե միջինը»: Իսկ եթե կոնկրետ իրավիճակում դա անհնար է, ապա *միայն* կենսական ազգային շահերի պաշտպանության հրատապությամբ է հնարավոր արդարացված համարել որևէ փոխզիջում կամ կոնսենսուս՝ «վտանգելու» ժողովրդավարության արժեքները: Եթե անվտանգության համար պայքարելիս մենք հեշտությամբ զոհաբերենք մարդու իրավունքներն ու ժողովրդավարության արժեքները, ազգի ազատությունն ու արժանապատվությունը, ապա հաղթանակն այդ պայքարում կլինի *սյուռուսյան*:

Այս չափանիշը երաշխավորելն էլ հենց այն գինն է, որ ժողովրդավարությունները վճարում են հանուն ազատության:

АРТЁМ СЕДРАКЯН – *Право, безопасность и демократия.* – В статье исследуется всестороннее соотношение между правом и безопасностью, безопасностью и свободой, а также демократией.

По мнению автора, существует большое столкновение между интересами безопасности и ценностями демократии, что заметно во всех сферах общественной жизни. Цель автора – изучить предполагаемые и реальные последствия данного конфликта, а также понять, возможно ли найти необходимый баланс (правовой эквилибриум) между этими жизненно важными интересами и ценностями.

Автор делает заключение, что демократия не противоречит безопасности. Всегда можно найти «золотую середину». И здесь трудно переоценить роль права в качестве своеобразного инструмента (регулятора).

Ключевые слова: *право, свобода, демократия, права человека, безопасность, национальная безопасность, оборона государства, чрезвычайная ситуация, правовой эквилибриум*

ARTYOM SEDRAKYAN – *Law, Security and Democracy.* – Systemic relations between law and security, security and liberty as well as democracy are analyzed in this article.

It is assessed that there is a grand clash between security interests and democratic values and that this exists in each and every aspect of public life. The aim is to study hypothetical and real consequences of this clash; understand whether it is possible to find the necessary balance (legal equilibrium) of those interests and values.

The author concludes that democracy is not opposed to security. You can always find the “golden mean”. And here the role of law as a unique tool (a regulator) is hardly to be overestimated.

Key words: *law, liberty, democracy, human rights, security, national security, defence of the state, time of emergency, legal equilibrium*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՐԱ ԳԱԲՈՒԶՅԱՆ

Հոդվածում քննարկվում են այն նորույթները, որոնք հանցագործության փուլերի հարցում առկա են ՀՀ քրեական նոր օրենսգրքում: Հեղինակը բացահայտում է այդ նորույթների բովանդակությունը և նշում է, որ դրանք ավելի հիմնավորված են, քան գործող օրենսգրքի կարգավորումները:

Բանալի բառեր – *հանցագործության նախապատրաստություն, հանցափորձ, ավարտված հանցագործություն, հանցագործության օբյեկտիվ կողմ, հանցակազմ, հանցակազմի հատկանիշ, ավարտված հանցափորձ, չավարտված հանցափորձ*

Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգիրքը աչքի է ընկնում բազմաթիվ նորամուծություններով, այդ թվում՝ հանցագործության փուլերի կարգավորման հարցում: Ինչպես և նախկին օրենսդրությամբ, քրեական նոր օրենսգրքով հանցագործության փուլերն են հանցագործության նախապատրաստությունը, հանցափորձը և ավարտված հանցագործությունը: Նորույթ են պարունակում դրանց հասկացությունները: Մասնավորապես, **նախապատրաստության** հասկացությունը ձևակերպված է հետևյալ կերպ. հանցագործության նախապատրաստություն են համարվում դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք կամ միջոց ձեռք բերելը, գործիքը կամ միջոցը հարմարեցնելը կամ դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե անձը իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում սկսել դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը:

Եթե դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք կամ միջոց ձեռք բերելը, գործիքը կամ միջոցը հարմարեցնելը կամ դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը այլ ավարտված հանցագործության հատկանիշներ են պարունակում, ապա արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ այն հանցագործության նախապատրաստությունը, որն ընդգրկված էր անձի դիտավորության մեջ, և որը նա պատրաստվում էր կատարել, և այն ավարտված հանցագործությունը, որն անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն է:

Քրեական նոր օրենսգրքում նշվում է ոչ թե անձի կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունը ավարտին չհասցնելու մասին,

այլ այն մասին, որ հանցավորը չի կարողանում սկսել հանցագործության օբյեկտիվ կողմը: Դրանով նախ հստակ երևում է, թե ինչպես է հանցագործության նախապատրաստությունը տարբերվում հանցափորձից: Բացի դա, մեր կարծիքով, արդարացիորեն նշվում է այն մասին, որ հանցագործության նախապատրաստության դեպքում հանցավորը չի հասցնում կատարել հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքներից որևէ մեկը: Եվ վերջապես, օրենսդրորեն ամրագրված է տեսության մեջ հայտնի այն դրույթը, որ եթե դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք կամ միջոց ձեռք բերելը, գործիքը կամ միջոցը հարմարեցնելը կամ դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը այլ ավարտված հանցագործության հատկանիշներ են պարունակում, ապա արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ անձը ցանկանում է սպանել որևէ մեկին և դրա համար ապօրինաբար հրազեն է ձեռք բերում ու այդ պահին բռնվում է: Նա պատասխանատվության կենթարկվի սպանության նախապատրաստության և ապօրինաբար հրազեն ձեռք բերելու համար:

Պետք է նշել նաև, որ, ի տարբերություն նախկին օրենքի, նոր օրենքով հանցագործություն է նաև ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների նախապատրաստությունը: Դա հիմնավորվում է նրանով, որ որոշ դեպքերում հանրորեն վտանգավոր անձը անպատիժ էր մնում: Օրինակ՝ նախկին օրենսգրքի համաձայն, եթե հանցագործությունը ավարտին չէր հասնում կազմակերպիչի, դրդիչի կամ օժանդակողի կամքից անկախ հանգամանքներով, ապա նրանք պատասխանատվության էին ենթարկվում հանցագործության նախապատրաստության համար: Բնականաբար, այս անձինք պատասխանատվության կենթարկվեին հանցագործության նախապատրաստության համար, եթե խոսքը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին էր: Ստացվում էր, որ, օրինակ, մարդու առևանգում կազմակերպողը ենթակա չէ քրեական պատասխանատվության, որովհետև մարդուն առևանգելու հասարակ տեսակը միջին ծանրության հանցագործություն է: Կարծում ենք, որ դա հիմնավորված չէր: Իհարկե, կարելի է ասել, թե հարցի լուծում կարող էր լինել՝ մարդուն առևանգելու հասարակ տեսակի համար սանկցիան խստացնելը, այն հաշվով, որ այն վերածվեր ծանր հանցագործության: Բայց պետք է նկատի ունենալ, որ ոչ մի երաշխիք չկա, որ օրենսդիրը կարող է հանրային բավականին բարձր վտանգավորության արարքները այսուհետև ևս նախատեսել որպես ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք: Ուստի կարծում ենք, որ նոր օրենսգրքի մոտեցումն ավելի ճիշտ է:

Պետք է նշել նաև, որ արտասահմանյան երկրների մեծ մասում, բացառությամբ ԱՊՀ երկրների, հանցագործության նախապատրաստության ինստիտուտ գոյություն չունի: Որոշ երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում խոսվում է դավադրության, այսինքն՝ հանցանք կատարելու

համաձայնությունն ձեռք բերելու մասին¹: Մեր օրենսդրության համաձայն՝ դա հանցագործության նախապատրաստություն է, և հանցանք կատարելու համաձայնությունն ձեռք բերելը առանձին նախատեսելն անհրաժեշտ չէ:

Հանցափորձը բնորոշվում է հետևյալ կերպ. հանցափորձ է համարվում դիտավորությամբ կատարվող գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է հանցանք կատարելուն և պարունակում է սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, սակայն անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվում՝ սովյալ հանցակազմի որևէ հատկանիշի բացակայության հետևանքով:

Հանցափորձի հասկացության մեջ, ի տարբերություն նախորդ օրենսգրքի, շեշտը դրվում է այն բանի վրա, որ հանցափորձի ժամանակ կարևորը ոչ թե այն է, որ հանցագործությունը չի ավարտվում, այլ այն, որ չի իրագործվում անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը՝ նրա կամքից անկախ հանգամանքներով: Օրինակ՝ անձը սպանում է մի կնոջ՝ կարծելով, թե կինը հղի է, սակայն հետագայում պարզվում է, որ կինը հղի չի: Հանցավորը պատասխանատվության կենթարկվի հղի կնոջ սպանության փորձի համար: Բնականաբար, հանցափորձ է նաև այն իրադրությունը, երբ հանցավորը չի կարողանում իրագործել դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը իր կամքից անկախ հանգամանքներով, որովհետև չի կարողանում կատարել ամբողջ օբյեկտիվ կողմը, և հանցակազմի որևէ հատկանիշ այդ պատճառով բացակայում է: Հանցափորձի այս հասկացությունը շատ նման է որոշ երկրների քրեական օրենսդրություններում առկա հանցափորձի հասկացությանը: Օրինակ՝ ԳԴՀ քրեական օրենսգրքի պարագրաֆ 22-ում հանցափորձը բնորոշվում է հետևյալ կերպ. հանցափորձ է կատարում նա, ով արարքի մասին իր պատկերացումների համաձայն անմիջականորեն սկսում է հանցակազմի իրականացումը²:

Օրենքում ամրագրվում է նաև տեսությանը հայտնի այն դրույթը, որ եթե հանցափորձի ժամանակ հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված օբյեկտին ավելի փոքր վնաս է պատճառվում, քան ընդգրկված էր դիտավորության մեջ, ապա դա կլանվում է անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի մեջ և ինքնուրույն չի որակվում: Եթե հանցափորձն իրականացնելիս հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված օբյեկտին անզուլուրությամբ կամ անուղղակի դիտավորությամբ պատճառվում է ավելի մեծ վնաս, քան ընդգրկված էր դիտավորության մեջ, կամ վնաս է պատճառվում մեկ այլ օբյեկտի, ապա արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ եթե անձը ցանկանում է սպանել մեկին, բայց նրա առողջությանը ծանր

¹ Տե՛ս «Уголовное законодательство зарубежных стран», М., 1999, էջ 180-183:

² Տե՛ս նույն տեղը, էջ 256:

վնաս է պատճառում, ապա արարքը որակվում է որպես սպանության փորձ, իսկ եթե ցանկանում է սպանել Ա.-ին, կրակում է նրա ուղղությամբ, վրիպում է, և փամփուշտը դիպչում է Բ.-ին, ու մահանում է Բ.-ն, ապա արարքը կորակվի համակցությամբ՝ որպես Ա.-ի սպանության փորձ և Բ.-ին անզգուշությամբ կյանքից զրկել: Կամ՝ ցանկանում է մեկի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել, հարվածում է նրան, առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառում, բայց վերջինս հարվածից ընկնում է, և առողջությանը ծանր վնաս է պատճառվում: Այդ դեպքում հանցավորը պատասխան կտա դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու և անզգուշությամբ ծանր վնաս պատճառելու համար:

Օրենքը կարգավորում է նաև հանցավորձի տեսակների հարցը, որն առկա էր տեսության մեջ, բայց ուներ և ներկայումս էլ ունի մեծ գործնական նշանակություն: Ընդ որում, հանցավորձի տեսակների բնորոշումը համահունչ է ՀՀ վճռաբեկ դատարանի տված բնորոշումներին³: Այսպես՝ հանցավորձը լինում է ավարտված և չավարտված: Հանցավորձը համարվում է ավարտված, եթե անձը կատարում է այն արարքը, որն անհրաժեշտ ու բավարար էր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունն ավարտին հասցնելու համար, և գիտակցում է, որ հանցագործությունն ավարտին է հասել, սակայն դա տեղի չի ունենում հանցակազմի որևէ հատկանիշի բացակայության հետևանքով: Հանցավորձը համարվում է չավարտված, եթե անձը գիտակցում է, որ հանցագործությունն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է շարունակել սկսած արարքի կատարումը կամ նոր արարք կատարել: Հանցավորձի տեսակների հասկացությունից է կախված հանցագործությունից կամովին հրաժարվելու և պատասխանատվության ու պատժի անհատականացման հարցը: Այսպես, եթե հանցավորը կրակում է տուժողի վրա, վերջինս վայր է ընկնում, իսկ հանցավորը կարծում է, թե սպանել է տուժողին, թեև իրականում տուժողը չի մահանում, ապա առկա է ավարտված հանցավորձը, իսկ եթե հանցավորը կրակում է տուժողի վրա, վերջինս վիրավորվում է, և հանցավորը տեսնում է դա ու գիտակցում է, որ սպանությունն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է շարունակել սկսած արարքի կատարումը կամ նոր արարք կատարել (օրինակ՝ այլևս փամփուշտ չունի և պետք է այլ եղանակով կատարի սպանությունը), ապա այդ պահին առկա է չավարտված հանցավորձը:

Փոփոխության է ենթարկվել **ավարտված հանցագործության** հասկացությունը: Գործող օրենսգրքում այդ հասկացության մեջ շեշտը դրվում է հանցավորի դիտավորության վրա: Այժմ ավարտված հանցագործությունը բնորոշվում է հետևյալ կերպ. դիտավորյալ հանցագործությունը համարվում է ավարտված, եթե պարունակում է հանցավորի

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0087/01/12 նախադեպային որոշումը:

դիտավորության մեջ ընդգրկված հանցակազմի բոլոր հատկանիշները: Բանն այն է, որ եթե հանցավորը ցանկանում է սպանել տուժողին և կրակում է նրա վրա, բայց կարողանում է միայն առողջությանը ծանր վնաս պատճառել, ապա արարքը որակվում է որպես սպանության փորձ, թեև արարքում առկա են առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի բոլոր հատկանիշները: Ուստի ճիշտ է այն ձևակերպումը, որ ավարտված հանցագործությունը առկա է այն դեպքում, երբ արարքում առկա են **հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված հանցակազմի բոլոր հատկանիշները:**

Հանցագործությունից կամովին հրաժարվելը նախատեսվել է որպես քրեական պատասխանատվությունից ազատելու տեսակ, որովհետև իրականում այդ ինստիտուտը ոչ մի առնչություն չունի հանցագործության փուլերի հետ: Առնչությունն այնքանով է, որ հանցագործությունից կամովին հրաժարվել հնարավոր է միայն չավարտված հանցագործության դեպքում:

ԱՐԱ ԳԱԲՍՅԱՆ – Особенности регулирования стадий преступления в новом Уголовном кодексе Республики Армения. – В статье рассматриваются нововведения в законодательном регулировании стадий преступления в новом Уголовном кодексе Республики Армения. Автор раскрывает содержание этих нововведений и отмечает, что они более обоснованы, чем регулирования данного вопроса в действующем УК.

Ключевые слова: *приготовления к преступлению, покушение, оконченное преступление, объективная сторона преступления, состав преступления, признак состава преступления, оконченное покушение, неоконченное покушение*

ԱՐԱ ԳԱԲՍՅԱՆ – Features of the Regulation of Stages of Crime in the New Criminal Code of the Republic of Armenia. – The article discusses the novelties that are present in the new Criminal Code of the Republic of Armenia regarding the stages of crime. The author reveals the content of these novelties and states that they are more justified than the regulations of the current code.

Key words: *preparation of a crime, attempted crime, completed crime, objective aspect of a crime, crime, characteristic of a crime, completed criminal attempt, unfinished criminal attempt*

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴՍՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ
ԲԻՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ

Հոդվածում հեղինակը Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի վերլուծության հիման վրա ներկայացրել է երկրի բարձրագույն դատական ատյանի կազմավորման ինստիտուցիոնալ որոշ հիմնախնդիրներ: Մասնավորապես, դատական իշխանության արտաքին անկախության ապահովման համատեքստում իրավական քննադատության առարկա է դարձել ՀՀ Ազգային ժողովի կողմից Վճռաբեկ դատարանի նախագահի և դատավորների ընտրության ընթացակարգը: Երկրի բարձրագույն դատական ատյանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական կարևորագույն առաքելության հաշվառմամբ՝ ոչ իրավաչափ է գնահատվել վերջին օրենսդրական փոփոխություններով Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջներն անհամաչափ մեղմելը, իսկ հակակոռուպցիոն պալատի ձևավորումը ՀՀ վճռաբեկ դատարանում համարվում է խնդրահարույց:

Բանալի բառեր – *օրենքի միատեսակ կիրառություն, դատական իշխանության անկախություն, դատավորների ընտրության (նշանակման) ընթացակարգ, օրենսդիր իշխանություն, դատավորների (դատարանների) մասնագիտացվածություն, դատավորներին ներկայացվող պահանջներ, հակակոռուպցիոն պալատ*

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է, որը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Իրավական համակարգերի գլոբալացման արդի պայմաններում բարձրագույն դատական ատյանին իրավունքի զարգացման և միասնական իրավաքաղաքականության (օրենքի միատեսակ կիրառության) ապահովման գործառնություններ վերապահելը և այս խնդրի արդյունավետ իրացման նպատակով դատավարական և ինստիտուցիոնալ

համապատասխան մեխանիզմներ ներմուծելը, կարծում ենք, իրավաչափ են չխոչընդոտելով, իհարկե, Վճռաբեկ դատարանի՝ որպես դատական իշխանության բարձրագույն մարմնի կողմից նաև արդարադատության գործառնության իրականացումը: Եվ, ըստ էության, հավասարակշռված կարգավորման այս գաղափարն է զարգացել 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանն ապահովում է, մի կողմից՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, մյուս կողմից՝ վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Պետք է նշել, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը սահմանում էր, որ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, Վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Քննարկվող նորմի՝ նշված խմբագրությամբ պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ արդարադատության և օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունների հարաբերակցության հարցը տեսաբանների և պրակտիկ աշխատողների կողմից լայն քննարկման առարկա էր դարձել¹: Այս սահմանադրաիրավական նորմի վերլուծությունից բխում էր, որ Վճռաբեկ դատարանը ՀՀ բարձրագույն դատական ատյանն է, հետևաբար, որպես դատական իշխանության մարմին, կոչված էր իրականացնելու արդարադատություն: Սակայն միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ունի նաև օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրաիրավական առաքելություն: Եվ հստակ չէր, թե արդյոք Վճռաբեկ դատարանը արդարադատություն իրականացնելով է ապահովում օրենքի միատեսակ կիրառությունը, թե օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու եղանակով է վերջին հաշվով իրականացնում արդարադատություն:

Վճռաբեկ դատարանին վերապահված այս երկու գործառնությունների համատեքստում հարց է ծագում, թե ինչպիսին պետք է լինի այս գործառնությունների հարաբերակցությունը. արդյոք ք դրանցից որևէ մեկի արդյունավետ իրականացումը պետք է դիտարկել որպես գերխնդիր և ապահովել դրա իրացումը նույնիսկ արդարադատության շահերի հաշվին, թե՞, օրինակ, վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կանոնակարգումը պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի ընտրողական արդարադատության իրականացումն այն պարագայում, երբ

¹ Տե՛ս **Ա. Ս. Ղամբարյան**, Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համատեսական և մեթոդաբանական հիմնախնդիրներ), Եր., 2013, էջ 258-280, **Վ. Վ. Հովհաննիսյան**, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական խնդրի իրացումը քաղաքացիական դատավարությունում // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», № 1 (19), Եր., 2016, էջ 64-75:

խոսքը անձի հիմնարար իրավունքների և օրինական շահերին առնչվող դատական սխալների մասին է, այսինքն՝ երբ հնարավոր են դատական սխալի առկայության այնպիսի փաստեր, որոնք կապված չլինեն օրենքի միատեսակ կիրառության (իրավունքի զարգացման) ապահովման անհրաժեշտության հետ, և մյուս կողմից՝ անկախ դատական սխալի առկայությունից՝ նախատեսված լինի սուսկ օրենքի միատեսակ կիրառության ապահովման հիմքով բողոքը վարույթ ընդունելու օրենսդրական հնարավորություն: Չխորանալով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կարգավորումների մեջ, ինչը կարող է մեկ այլ հոդվածի շրջանակում գիտական քննարկման առարկա լինել, այդուհանդերձ, կարող ենք նախնական դիտարկում անել առ այն, որ թերևս վերջին պայմանին չի բավարարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի այն կարգավորումը, համաձայն որի՝

«1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե գալիս է հետևության, որ

1) վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, կամ առերևույթ առկա է բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող որևէ փաստական կամ իրավական հանգամանք, և միաժամանակ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար, կամ

2) առերևույթ լուրջ դատական սխալ թույլ տալու հետևանքով կամ առերևույթ որևէ լուրջ փաստական կամ իրավական հանգամանք ի հայտ գալու ուժով կայացված դատական ակտը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը»:

Այս նորմի բովանդակությունից բխում է, որ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար պետք է առերևույթ առկա լինի վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալ այն դեպքում, երբ իրավունքի զարգացման համատեքստում կարող է առաջանալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր՝ անկախ ստորադաս դատարանի կողմից դատական սխալ թույլ տրված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակին այս թեկուզև հպանցիկ անդրադարձը պայմանավորված է նրանով, որ երկրի բարձրագույն դատական աստիճանի գործառույթների հստակ ընկալումից է մեծապես կախված վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի համարժեք բովանդակային օրենսդրական կանոնակարգումը: Այսպես, օրինակ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառույթը հանգեցրել է

սեր, դառնում են օգտագործման համար ոչ պիտանի ու վերածվում են թափոնի: Փոքր եզրաչափերի այս թափոնները սովորաբար հայտնվում են թափոնային այլ հոսքերում՝ կենցաղային թափոններում, իսկ խոշոր եզրաչափերի էլեկտրոնային թափոնները տեղադրվում են աղբարկղների կողքին կամ դրանց համար չսահմանված այլ վայրերում (օրինակ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում բոլորիս համար տեսանելի են թափոնի վերածված՝ լվացքի մեքենաների հանգրվանատեղեր): Այս առումով առավել խոցելի, բայց իրավական կարգավորման ենթարկված չէ փոքր մարտկոցների հիմնախնդիրը: Նշենք, որ Եվրոպական միությունում նման թափոնների կառավարման ոլորտում գործում է համապատասխան օրենսդրություն, մինչդեռ ՀՀ-ում դրանք ևս հիմնականում խառնվում են կենցաղային աղբի հետ, և ինչպես մյուս երկրներում, որտեղ չկա էլեկտրական թափոնների վերաբերյալ ազգային օրենսդրություն, դրանք գրանցվում են որպես այլ տեսակի թափոններ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ նման դեպքերում այս տիպի թափոնների վտանգավոր բաղադրիչները պատշաճ կերպով չեն հեռացվում՝ անդառնալի բացասական հետևանքներ թողնելով շրջակա միջավայրի վրա, այնինչ դրանք կարող են վերամշակվել՝ առանց համապատասխան աշխատակիցներին դրանցում առկա վնասակար նյութերից արդյունավետ պաշտպանելու: Ու թեև աշխարհում առանձին հավաքվում և կառավարվում են էլեկտրական թափոնների միայն 20%-ը⁶, բայց, մեր խորին համոզմամբ, լիովին հնարավոր է պատշաճ օրենսդրություն մշակելու և ընդունելու դեպքում, համապատասխան ֆինանսական հոսքերի ներգրավմամբ, բնակչության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու միջոցով փոքր տարածք զբաղեցնող և ոչ մեծ բնակչություն ունեցող Հայաստանում հասնել լիարժեք կարգավորման: Մինչդեռ այդ հասկացությունների բացակայությունն արդեն իսկ լուրջ խոչընդոտ է դրանց գործածության իրավական հիմքերը սահմանելու և խորքային իրավակարգավորումներ նախատեսելու առումով:

Համաձայն ենք, որ ՀՀ օրենսդրությունը պարունակում է կարգավորումներ արտադրության և սպառման թափոնների, շինարարական և քանդման թափոնների, բժշկական թափոնների և վտանգավոր քիմիական նյութերի, թափոնային յուղերի, քսանյութերի վերաբերյալ, բայց իրավական և պրակտիկ առումներով շատ կարևոր է, որ թափոնների գոնե բոլոր խոշոր հոսքերի հասկացություններն առկա լինեն ոլորտի կենտրոնական նորմատիվ ակտում՝ «Թափոնների մասին» օրենքում: Քննարկվող թեմայի հետ իրավական տեսանկյունից ուղղակի առնչություն ունի նաև այն «տարօրինակությունը», որ «կենսաբանական թափոն» հասկացությունը ներկայացված է Վարչական իրավա-

⁶ Տե՛ս http://collections.unu.edu/eserv/UNU:6341/Global-E-waste_Monitor_2017_electronic_single_pages_.pdf

խախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում: Մտացվում է, որ թեև նման թափոններ առաջանում են մարդկային նորմալ կենսագործունեության ընթացքում, թեև շատ կարևոր է դրանց արդյունավետ գործածության ոլորտը, այդ թվում՝ օգտահանումը, վերամշակումը, հեռացումը և այլն, բայց հասարակությունը դրանց մասին պատկերացում կարող է կազմել միայն վարչական իրավախախտումների օրենսդրության շրջանակներում: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կենսաբանական թափոնին տրված մեկնաբանությունը, այն է՝ կենդանական ծագման պարենային և ոչ պարենային հումքի վերամշակումից ստացված թափոններ, ինչպես նաև անասնապահական, թռչնաբուծական և ձկնաբուծական ձեռնարկությունների գործունեության հետևանքով առաջացած թափոններ, առավել բնորոշ է օրգանական թափոնի և ոչ թե կենսաբանական թափոնին, բայց այստեղ էլ պետք է նկատի ունենալ, որ օրգանական թափոնները չեն սահմանափակվում միայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում նախատեսված՝ կենսաբանական թափոնների սահմաններով: Օրգանական թափոնները, բացի վերոգրյալից, ներառում են նաև գյուղատնտեսական գործունեության մշակաբույսերի թափոնները: Ելնելով վերոգրյալից՝ կարևոր ենք համարում նախատեսել օրենսդրության մեջ «օրգանական թափոն» կամ «կենսաքայքայվող թափոն» հասկացության և դրանց գործածության լիարժեք իրավակարգավորումները, ինչի շնորհիվ կդադարի գործել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված թերի սահմանումը:

Այս առումով կարևոր ենք համարում ընդգծել, որ մի շարք երկրներում օրգանական թափոնների կառավարման լավագույն լուծումներից են կենսագազ արտադրող կայանները: Դրանց գործունեությունը համարվում է բնապահպանական և ֆինանսական օգուտներ բերող, որտեղ կարևորվում են քիմիական պարարտանյութերը օրգանական պարարտանյութերով փոխարինելու, էլեկտրաէներգիայի ու ջեռուցման կայուն հասանելիության և հատկապես կլիմայի փոփոխության հետևանքով ջերմոցային գազերի արտանետումների կրճատման գործընթացները: Հայաստանում, օրինակ, բնական գազը կենցաղում օգտագործվում է գրեթե համատարած (տնային տնտեսությունների 90 տոկոսից ավելին), սակայն, համաձայն կանխատեսումների, բնական գազի համաշխարհային պաշարները ներկա սպառման տեմպերի պահպանման պարագայում սպառվելու են մոտակա 45-55 տարիներին⁷: Ահա ևս մեկ պատճառ թափոնների օգտահանման միջոցով կենսագազի կայաններ գործարկելու համար: Ընդգծենք, որ Հայաստանում այս բնագավառում վիճակն անմխիթար է: Օրինակ՝ 2008-2014 թթ. Ընթացքում «Լուսակերտ բիոգազ փլանթը» գործարկել է թռչնաբուծական թափոն-

⁷ Տե՛ս ՀՀ կառավարության 2021 թ.-ի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշման հավելված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.):

ների կառավարմամբ կենսագազի կայան, որն իր նախադեպը չի ունեցել ոչ միայն Հայաստանում, այլև Կովկասում: Ցավոք, 2014 թ.-ից այն դադարեցրել է իր գործունեությունը:

2011 թ.-ից ՀՀ-ում աշխատում է նաև «ԱՌՎԱԿՕ» հայ-նորվեգական ՓԲԸ-ն, որն զբաղվում է օրգանական թափոնների վերամշակմամբ՝ ստանալով օրգանական կենսածին տարատեսակ պարարտանյութեր և հողի բարելավիչներ: Այս և այլ որոշ ընկերությունների գործունեությունը փաստում է, որ Հայաստանում ևս հնարավոր է հավաքել օրգանական թափոններ, վերամշակել, օգտահանել դրանք, սակայն նշենք, որ այդ ամենն առավել լիարժեք ու ավելի մեծ ծավալներով իրագործելի կլինի իրավական դաշտի բարելավման և ենթակառուցվածքների հարմարեցման դեպքում, մինչդեռ ոլորտում հասկացությունների հստակեցման լուրջ խնդիր կա:

Ի դեպ, քննարկվող ոլորտի օրենսդրությունը, ընդգրկուն հասկացություններից զատ, չի նախատեսում նաև ոլորտի համար կարևոր այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «բարձրորակ վերամշակում», «ցածրորակ վերամշակում», «աղբի տարանջատում» և այլ եզրույթներ: Ստացվում է, որ թափոնների առանձին տեսակների հասկացությունները կա՛մ առհասարակ բացակայում են, կա՛մ թերի են, կա՛մ իրենց տեղում չեն, ինչը լուրջ խոչընդոտ է դրանց արդյունավետ կառավարումն իրականացնելու ճանապարհին:

Թափոնների կառավարման բնագավառում հասկացությունները լիարժեք սահմանելուն զուգահեռ առաջնային քայլերից է դրանց շեղումն աղբավայրերից, այսինքն՝ առաջացման վայրերում դրանց տարանջատումը: Թափոնների տեսակավորումը նյութերի օգտահանման ամենաարդյունավետ նախապայմաններից է: Թափոնների տեսակավորված հավաքումը բոլոր առումներով հեշտացնում է թափոնների սկզբնական մշակման, ինչպես նաև վտանգավոր թափոնների տարանջատման և վնասագերծման գործընթացները: Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում փաստորեն համընդհանուր մոտեցում է աղբավայրերում հսկայական ծավալներով վտանգավոր թափոնները կենցաղային թափոններին միախառնած տեղադրելը: Դրա պատճառը ոչ միայն ենթակառուցվածքների պակասությունն է, այլև այն փաստը, որ ՀՀ-ում թափոնների տեսակավորումը՝ որպես նյութերի ամենաարդյունավետ օգտահանման նախապայման, պատշաճ չի խրախուսվում:

Այս բնագավառի արտոնությունների առումով ուշագրավ է «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը. «Թափոնների օգտահանմանն ու դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումների խթանման նպատակով թափոնների գոյացման նվազեցմանն ուղղված տեխնոլոգիաներ ներդնող կազմակերպությունները, որոնք թափոններ են օգտահանում արտադրանքի արտադրման (աշխատանքի կատարման, ծառայությունների մատուցման) ընթացքում, իրակա-

նացնում են դրանց հավաքումը, պահեստավորումը, արտադրամասերի շինարարությունը, ինչպես նաև կազմակերպում են թափոնների օգտահանման համար սարքավորումների արտադրություն, փայտօրակյան մասնակցություն են ունենում թափոնների օգտահանմանը և դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորմանը, կարող են ստանալ արտոնություն օրենքով սահմանված դեպքում»: Առաջին հայացքից արդեն իսկ պարզ է, որ այս հոդվածն ունի բովանդակության պարզեցման կարիք, մասնավորապես՝ պարզ չէ, թե հոդվածում թվարկված գործունեություններից որևէ մեկի իրականացումը բավարար է արդյոք արտոնություն ստանալու համար, թե՞ անհրաժեշտ են մատնանշված բոլոր գործունեությունները: Բացի բովանդակային անորոշությունից, հոդվածն ունի նաև կիրառման բարդություն, քանի որ այս օրենքի ընդունումից հետո որևէ նորմատիվ իրավական ակտով չի նախատեսվել նշված արտոնությունների համար դիմելու և դրանք ստանալու ընթացակարգ: Բացի այդ, 23-րդ հոդվածը չի մասնավորեցնում նշված արտոնությունների տեսակները՝ հարկային արտոնություն, ներմուծման արտոնություն, գույք կանաչ սակագի՞ն և այլն: Վստահ ենք, որ նման անորոշությունները հարթելուց հետո միայն հնարավոր կլինի կյանքի կոչել այս հոդվածը: Վերոհիշյալը հիմնավորելու համար բավական է նշել, որ թեև «Թափոնների մասին» ՀՀ օրենքը գործում է դեռևս 2005 թ.-ից, սակայն մինչ օրս՝ օրենքի ընդունումից 17 տարի անց, որևէ սուբյեկտ այս հոդվածի հիման վրա չի ստացել արտոնություն:

Ինչ վերաբերում է տեսակավորման հարցի կարևորությանը, ապա այն հատկապես ընդգծվում է որոշ՝ առանձնակի վտանգավոր իրերի ու առարկաների դեպքում, ինչպես օրինակ՝ սնդիկային ջերմաչափը, սնդիկ պարունակող լամպերը և այլն: Թեև հազարավոր ջերմաչափեր ու լամպեր կոտրվում են կամ դառնում օգտագործման համար ոչ պիտանի, սակայն ՀՀ բնակիչներն այս առարկաների վտանգավորության աստիճանի մասին լավագույնս տեղեկացված լինելու դեպքում էլ չունեն օբյեկտիվ հնարավորություն դրանք հեռացնելու պատշաճ վայրում: Չնայած այդպիսի թափոնների վնասակարությանը և դրանց բացասական ազդեցություններին՝ իրավական համապատասխան գործընթացներ կամ ենթակառուցվածքի նախագծում կամ շինարարություն դեռևս չեն իրականացվում:

Քննարկվող հարցի առնչությամբ ցանկանում ենք նաև մատնանշել, որ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի՝ «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժնում շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններից է նաև թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կառավարման համակարգի կատարելագործումը: Բացի այդ՝ ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարությունը մշակել և շրջանառության մեջ է դրել թափոնների կա-

ռավարման ոլորտում կարևորագույն տեղ զբաղեցնող՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը⁸, որը, իրավակարգավորումներից բացի, նախատեսում է նաև ոլորտի մի շարք հասկացություններ:

Այսպիսով, սույն հոդվածում քննարկված և բազմաթիվ այլ «հասկացությունների» պակասը, դրանց թերի լինելը լուրջ խոչընդոտ են իրավական դաշտում համապատասխան խորքային ու լիարժեք իրավակարգավորումներ նախատեսելու և դրա հիման վրա պրակտիկա ձևավորելու առումով: Մինչդեռ տնտեսապես զարգացած որոշ երկրներ չեն վախեցել իրենց առջև նպատակ դնել հասնելու «գրո թափոն»-ի: Այն, բնականաբար, պահանջում է լայնածավալ ու պետական համապատասխան մարմինների ու հասարակության բոլոր խմբերի ջանադիր աշխատանք, բայց միևնույն ժամանակ ենթադրում է թափոնների իսպառ վերացում: Հայաստանում թափոնների կառավարման ոլորտը դեռևս հեռու է այդպիսին դառնալուց, բայց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թափոնների արդյունավետ կառավարումը հսկայական նշանակություն ունի հանրային առողջության, երկրի բնապահպանական, տնտեսական, սոցիալական, մշակութային ոլորտներում, հաշվի առնելով դրա բացասական հետևանքների երկարատև ու երբեմն լայնածավալ բնույթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ համաշխարհային զարգացումն ու իրողությունը թելադրում են համապատասխան պահանջներ այս ոլորտում, գտնում ենք, որ ծայրահեղ անհրաժեշտություն է ՀՀ-ում ևս կատարելագործել օրենսդրությունը՝ թերություններն ու բացերը վերացնելով, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն այս ոլորտում ճիշտ սահմանելու ու իրականացնելու ճանապարհով բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը և հասնել տեսանելի արդյունքների ու ապահովել շարունակականություն:

ОЛИМПИЯ ГЕГАМЯН – *Некоторые правовые вопросы, связанные с понятиями в сфере отходов в Республике Армения.* – Подчеркивая роль и значение воздействия отходов на современном этапе научно-технического развития и жизни человека, в данной статье представлен анализ современной ситуации в области понятий и видов отходов в Республике Армения. В статье указывается, что основная сложность сферы также заключается в том, что бенефициаром считается все население РА и в сфере управления задействовано большое количество субъектов.

В статье рассматриваются пробелы и недостатки отрасли и их последствия. Эффективное обращение с отходами имеет большое значение в здравоохранительной, экологической, экономической, социальной и культурной сферах страны, учитывая долгосрочный, а иногда и масштабный характер его негативных последствий.

⁸ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/3643/about>

Учитывая роль и значение национального законодательства в сфере, его влияние на практику, предложены соответствующие решения.

Ключевые слова: *циклическая экономика, биологические отходы, биоразлагаемые отходы, электронные отходы, иерархия отходов*

OLYMPIA GEGHAMYAN – *Some Legal Issues Related to the Concepts of Waste in the Republic of Armenia.* – Emphasizing the role and significance of the impact of waste at the current stage of scientific and technical development and human life, this article presents the analysis of the current situation in the field of concepts of waste management in the Republic of Armenia and their types. The article points out that the main complexity of the sector also lies in the fact that the entire population of the RA is considered the beneficiary and a large number of actors are involved in the management sector.

The article discusses the gaps and shortcomings of the sector and their consequences. Effective waste management is of great importance in the public health, environmental, economic, social and cultural spheres of the country, taking into account the long-term and sometimes large-scale nature of its negative consequences.

Taking into consideration the role and significance of the national legislation in the field, its impact on practice, appropriate solutions have been proposed.

Key words: *circular economy, biological waste, biodegradable waste, electronic waste, waste hierarchy*

**ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԵՎ ՀՀ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ**

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ՄԵՐԳԵՅ ՂԱԶԻՆՅԱՆ

Հոդվածում քննարկվում են քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության և ապաքաղաքացիության դեպքերի կրճատմանն առնչվող հիմնախնդիրները միջազգային և ներպետական իրավունքում: Ներկայացվում են ոլորտի կարգավորմանն ուղղված միջազգային իրավական ու ներպետական հիմնական փաստաթղթերը, դրանց կիրառման արդյունավետությունը և դերը քաղաքացիություն չունեցող անձանց բացահայտելու, նրանց անհրաժեշտ պաշտպանությունն ապահովելու գործում:

Մեզանում քաղաքացիություն չունեցող անձանց իրական վիճակը հաճախ ճիշտ չի գնահատվում: Նրանք առավելապես զրկված են լինում բոլոր այն իրավունքներից, որոնք մեզ համար սովորական են: Սա նրանց դարձնում է իրավական տեսանկյունից «անտեսանելի»․ մարդիկ, որոնք իրականում գոյություն ունեն, սակայն իրավաբանորեն չեն ճանաչվում:

Ապաքաղաքացիության կրճատմանն ուղղված միջազգային փաստաթղթերը կազմում են այն համընդհանուր իրավական բազան, որի դրույթներն իմպլեմենտացնելով՝ պետությունները պետք է ստեղծեն ներպետական արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելու իրենց սահմանների ներքում գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց առնվազն անվտանգ ու բարեկեցիկ կյանքը:

Բանալի բառեր - *Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 թ. կոնվենցիա, Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիա, ապատրիդների միջազգային պաշտպանություն, #Ես պատկանում եմ, ՄԱԿ ՓԳՀ, քաղաքացիության մասին ՀՀ օրենսդրություն*

Ապաքաղաքացիության հիմնախնդիրն ընդհանուր առմամբ սկզբնավորվել է 20-րդ դարի առաջին կեսերին՝ հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Դրա պատճառը հիմնականում պետությունների միջև վեճերն էին անհատների իրավական ինքնության սահմանման, պետության իրավահաջորդության, հասարակության մեջ ուրող խմբերի երկարատև մարզինալացման, առանձին անհատներին կամ խմբերին քաղաքացիությունից զրկելու վերաբերյալ¹:

¹ Տե՛ս **Perry J., Carey C.** Some Aspects of Statelessness Since World War I, *The American Political Science Review*, Vol. 40, No. 1 (Feb., 1946), էջ 118:

Այնուամենայնիվ, 20-րդ դարի սկզբին քաղաքացիության վերաբերյալ հարցերն ամբողջությամբ գտնվում էին պետությունների իրավասության ներքո և չէին կարգավորվում միջազգային իրավական նորմերով: 1923 թ. Միջազգային արդարադատության մշտական պալատը Թունիսի և Մարոկկոյի քաղաքացիության դեկրետների մասին №4 Խորհրդատվական եզրակացության մեջ նշեց, որ պետությունների նման իրավասությունը կարող է սահմանափակվել այլ պետությունների նկատմամբ այդ ոլորտում ստանձնած պարտավորություններով: Փաստորեն, ապաքաղաքացիության հետ կապված հարցերը դրանով ընդգրկվեցին միջազգային իրավական կարգավորումների մեջ:

1924 թ. Ազգերի լիգայի ներկայացուցչական մարմինը Ասամբլեան, բանաձև ընդունեց, որի հիման վրա ստեղծվեց Փորձագետների կոմիտե: Այն պետք է կազմեր միջազգային իրավական համաձայնագրով ամրագրման ենթակա՝ այդ ժամանակաշրջանի համար առավել ցանկալի ու հրատապ հարցերի նախնական ցանկ: Իր առաջին հանդիպման ժամանակ Փորձագետների կոմիտեն առաջ քաշեց 11 նման հարց, որոնց թվում առաջինը հենց քաղաքացիության վերաբերյալ ներպետական օրենքների միջև անհամապատասխանություններն էին, ինչը պատճառ էր պետությունների կողմից քաղաքացիություն ձեռք բերելու ու դադարեցնելու գործընթացների նկատմամբ ոչ միասնական մոտեցումների դրսևորման և պայմանավորում էր ապաքաղաքացիության դեպքերի առաջացումն ու հետագա ավելացումը:

Արդյունքում, տարիներ անց՝ 1930 թ. ապրիլին, Հաագայում ընդունվեց կոնվենցիա, որը վերաբերում էր քաղաքացիության մասին օրենքների միջև առկա կոլիզիոն խնդիրներին: Կոնվենցիան սահմանեց. «...միջազգային հանրության ընդհանուր շահերից է բխում ապահովել, որ նրա բոլոր անդամները պետք է ճանաչեն, որ յուրաքանչյուր անձ պետք է ունենա քաղաքացիություն, և կատարյալը, որին պետք է ուղղված լինեն մարդկության ջանքերն այս ոլորտում, քաղաքացիություն չունենալու բոլոր դեպքերի վերացումն է»²:

Կոնվենցիան սահմանեց այս ոլորտի կարգավորման առաջին միջազգային կանոնները, որոնց հիման վրա պետությունները կարող էին նվազեցնել ապաքաղաքացիության և երկքաղաքացիության դեպքերը. ի դեպ վերջինս այդ ժամանակաշրջանի համար դիտվում էր որպես խնդրահարույց և ոչ նորմալ երևույթ:

Չնայած միջազգային հանրության այս ջանքերին՝ պետությունների օրենսդրությունների միջև առկա անհամապատասխանությունները շարունակում էին գոյություն ունենալ, ինչը ավելացնում էր աշխարհում ապաքաղաքացիության դեպքերը: Բացի դրանից՝ տեղի էին ունե-

² League of Nations, Convention on Certain Questions Relating to the Conflict of Nationality Law, 13 April 1930, League of Nations, Treaty Series, vol.179, p. 89, No.4137, նախաբան, <https://www.refworld.org/docid/3ae6b3b00.html>

նում իրադարձություններ, որոնց պարագայում պետությունն ի վիճակի չէր լինում վերահսկել այս գործընթացները, մասնավորապես Երկրորդ համաշխարհային պատերազմը, ինչի հետևանքով աշխարհում քաղաքացիություն չունեցող անձանց թիվն էլ ավելի աճեց:

Այսօր միլիոնավոր մարդիկ գրկված են իրենց հիմնարար իրավունքներն իրացնելու հնարավորությունից, քանի որ ոչ մի պետություն չի ճանաչում նրանց որպես իր քաղաքացի: Մեզանում հաճախ քաղաքացիություն չունեցող անձանց իրական վիճակը ճիշտ չի գնահատվում: Այն դեպքերում, երբ անձը ոչ մի պետության կողմից չի ճանաչվում որպես իր քաղաքացի, նա դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, ինչը նրան գրկում է այնպիսի իրավունքներից, ինչպիսիք են վարձատրվող աշխատանք ունենալը, ազատ տեղաշարժվելը: Նա չի կարողանում ստանալ կրթություն և բժշկական օգնություն ու սպասարկում, գրկված է լինում սեփականության իրավունքից և նույնիսկ ամուսնությունն ու իր երեխայի ծնունդը գրանցելու հնարավորությունից: Քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարողանում նաև մասնակից լինել իրենց մշտական բնակության երկրում տեղի ունեցող իրավական գործընթացներին, օրինակ՝ ընտրություններին: Մա նրանց դարձնում է իրավական տեսանկյունից «անտեսանելի» մարդիկ, որոնք իրականում գոյություն ունեն, սակայն իրավաբանորեն չեն ճանաչվում³:

Այս ամենը պահանջում է պետությունների կողմից արդյունավետ մեխանիզմների մշակում՝ քաղաքացիություն չունեցող անձանց բացահայտելու, ճշգրիտ ուղղորդելու և փաստաթղթավորելու, ինչպես նաև նրանց հետ վարվելու ավելի արդյունավետ միջոցներ կիրառելու համար:

Անձի՝ քաղաքացիություն չունենալու պատճառները կարող են տարբեր լինել: Ներպետական օրենսդրության և օրենքների խնդիրներն ու բացերը, ինչպես նաև դրանց գործնական կիրառության ոլորտում բացթողումները և անտեղի խոչընդոտները տարբեր երկրներում համարվում են ապաքաղաքացիության հիմնական պատճառներ:

Մեկ այլ պատճառ կարող է լինել, երբ մարդիկ լքում են իրենց ծագման երկիրը, որի քաղաքացի են և չեն կարողանում ձեռք բերել վավեր փաստաթուղթ՝ լինելով քաղաքացիության երկրից դուրս: Եթե պետությունը թույլ չի տալիս քաղաքացիություն բացառապես ծննդով, ապա անձը կարող է հայտնվել ապաքաղաքացիության վտանգի առաջ: Որոշ դեպքերում քաղաքացիության շնորհմանն առնչվող գործընթացներում լինում է խտրական մոտեցում, իսկ երեխայի ծննդի գրանցման տեսանկյունից պետությունները չեն ցուցաբերում անհրաժեշտ ճկունություն:

Պետությունների փլուզումը կամ նոր պետությունների ձևավորումը (օրինակ՝ ԽՍՀՄ փլուզումը և դրա կազմում ընդգրկված պետու-

³ St' u Bezgraždanstvo: Principy analiza v celyah predotvrasheniya, sokrasheniya i zashity UYKB, 2008, էջ 3, <https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=4b5d680a2>

յունների անկախացումը) նույնպես կարող է ապաքաղաքացիության տարածմանը նպաստող պայման լինել: Ավելին, նման դեպքերում էթնիկ, ռասայական կամ կրոնական առանձին խմբեր կարող են իրենց կապն այս կամ այն պետության հետ ապացուցելիս մի շարք խնդիրների բախվել: Քաղաքացիության կորստի կամ զրկման պատճառ կարող են համարվել նաև տեղահանությունները՝ ինչպես միջազգային պաշտպանություն հայցելիս, այնպես էլ այլ նպատակներով:

Անկախ այն հանգամանքից՝ ապաքաղաքացիությունը պետությունների կողմից դրսևորվող խտրականության, նպատակային քաղաքականության, թե բացթողումների ու օրենսդրությունների միջև կոլիզիաների հետևանք է, այն հանգեցնում է առանձին խմբերի մարգիլացման, քաղաքացիական իրավունքների ոտնահարման, արդյունքում էլ անձանց տեղահանման: Ըստ այդմ՝ սերտ է փոխկապակցվածությունը քաղաքացիություն չունեցող անձանց և փախստականների միջև, ուստի նրանց խնդիրներով զբաղվելու համար միջազգային ինստիտուցիոնալ մարմին ընտրվեց Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակը (այսուհետև՝ ՄԱԿ ՓԳՀ): Բացի դրանից՝ այդ ժամանակաշրջանում ընդունվեցին միջազգային երեք հիմնական փաստաթղթեր, որոնք վերաբերում էին փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությանը: Դրանցից առաջինը 1951 թ. ընդունված՝ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան է, որը դարձավ փախստականների միջազգային պաշտպանության հիմնաքարը աշխարհում: Երկրորդը վերջինիս քույր փաստաթուղթն է, որը, սակայն, ընդունվեց փոքր-ինչ ուշացումով, այն է՝ Քաղաքացիություն չունեցող անձանց մասին 1954 թ. կոնվենցիան: Վերջինիս նպատակն է՝ «միջազգային համաձայնագրով կարգավորել և զարգացնել քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը»⁴: Այն այսօր էլ շարունակում է մնալ քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ միջազգային իրավական մեխանիզմների առանցքային կետը՝ հատկապես պայմանավորված նրանով, որ սահմանում է քաղաքացիություն չունեցող անձի հասկացությունը (որպես «անձ, որը ոչ մի պետության քաղաքացի չի համարվում՝ համաձայն այդ պետության օրենսդրության»⁵): Եվ վերջապես, երրորդ փաստաթուղթը Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիան է, որը սահմանում է քաղաքացիություն չունեցող անձանց հետ վարվելակերպի նվազագույն չափանիշները, ինչպես նաև ապաքաղաքացիության դեպքերի նվազեցման հիմնական ուղղությունները⁶:

1954 թվականի և 1961 թվականի կոնվենցիաները կազմում են ա-

⁴ Քաղաքացիություն չունեցող անձանց մասին 1954 թ. կոնվենցիա, նախաբան:

⁵ Նույն տեղում, հոդված 1 (1):

⁶ Տե՛ս Ապաքաղաքացիության կրճատման մասին 1961 թ. կոնվենցիա, նախաբան:

պաքաղաքացիության դեպքերի կանխմանն ուղղված բազմակողմանի ու համապարփակ միջազգային իրավական դաշտը, որն առնվազն երաշխավորում է քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակը, ըստ այդմ՝ որոշակի կայունություն է տալիս և առանձին դեպքերում նաև կանոնակարգում է նրանց կեցությունը տվյալ պետությունում: Սա, իր հերթին, զգալիորեն նվազեցնում է բնակչության հարկադիր տեղահանման հավանականությունը, ինչպես նաև դառնում է յուրատեսակ ելակետ այն գործերի համար, որոնք պետք է լուծվեն միջազգային իրավական գործիքների միջոցով:

Այս կոնվենցիաներն ամրագրում են պետությունների ներսում, ինչպես նաև նրանց միջև ի հայտ եկող լրջագույն մարտահրավերներից մեկի լուծմանն ուղղված, այն է՝ քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության արդյունավետ ապահովման պատրաստի մեխանիզմներ: Ձգտելով երաշխավորել բոլոր մարդկանց քաղաքացիության իրավունքի գործնական իրագործումը՝ այս իրավական համակարգը հատուկ ուշադրություն է դարձնում պետության կողմից տրամադրվող պաշտպանության ապահովմանը այն անձանց համար, որոնք այլապես միջազգային պաշտպանության կարիք կունենային:

Ի սկզբանե Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին 1954 թվականի կոնվենցիան մշակվում էր որպես 1951 թվականի կոնվենցիային կից արձանագրություն: Ապաստանի և ապաքաղաքացիության հիմնախնդիրները բավականին նման են իրար, հաճախակի նույնիսկ փոխապայմանավորված ու փոխկապակցված: Ըստ այդմ էլ անհրաժեշտ էր ձևավորել այնպիսի համակարգ, որը պետք է այս երկու հիմնախնդիրների լուծման մեխանիզմ դառնար: Իհարկե, քաղաքացիություն չունեցող ոչ բոլոր անձինք են ի վերջո փախստական դառնում կամ պետության սահման հատում: Բացի դրանից՝ պետություններն ունեն իրենց ներպետական կարգավորումը անձի քաղաքացիական պատկանելությունը որոշելու հարցում, որի հիման վրա որոշումներ են կայացնում այն դեպքում, երբ պետությունների սահմանած մոտեցումների միջև որոշակի տարբերություններ կան: Այսինքն՝ միշտ չէ, որ ապաքաղաքացիության դեպքերը պայմանավորված են խտրականությամբ կամ մարդու իրավունքների ապահովումից խուսափելու արդյունք են. ինչպես արդեն նշել ենք, դրանք կարող են լինել պետությունների իրավական դիրքորոշումների միջև անհամապատասխանությունների, օրենքների միջև կոլիզիաների հետևանք: Այս ամենը հաշվի առնելով՝ միջազգային հանրությունը ՄԱԿ-ի հովանու ներքո նախաձեռնեց ձևավորել ապաքաղաքացիության հետ կապված հիմնախնդիրների լուծմանն ուղղված համընդհանուր իրավական համակարգ. մշակվեց հատուկ կոնվենցիա, որն այսօր միջազգային իրավական այն հիմնական փաստաթուղթն է, որը սահմանում է քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակը, ինչպես նաև

ամրագրում է նրանց հիմնարար իրավունքներն ու պաշտպանության նվազագույն չափանիշները:

Ապատրիդների կարգավիճակի մասին արձանագրությունը Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիայից զատելու և դրան առանձին կոնվենցիայի կարգավիճակ տալու հիմնական կռիվներից մեկն այն էր, որ ապաքաղաքացիությունը դիտվի ինքնուրույն հիմնախնդիր, որը պահանջում է ուրույն և յուրահատուկ լուծումներ:

1961 թվականի կոնվենցիայի հիմնական նպատակը ապաքաղաքացիության հնարավոր դեպքերը կանխարգելելն էր: Կոնվենցիան սահմանում է ազգային պաշտպանության համակարգի զարգացման ու պետության կողմից տրամադրվող պաշտպանության արդյունավետության դեպքում միջազգային պաշտպանության անհրաժեշտության նվազեցմանն ուղղված շրջանակներ:

Ապաքաղաքացիության դեպքերի հետագա կանխարգելման նպատակով Կոնվենցիան սահմանում է հետևյալ հիմնական սկզբունքները, որոնք մասնակից պետությունները պետք է ներառեն քաղաքացիության վերաբերյալ իրենց ազգային օրենսդրության մեջ՝

- քաղաքացիություն ձեռք բերելու հնարավորություն այն անձանց կողմից, որոնք այլ պարագայում կլինեն քաղաքացիություն չունեցող, և որոնք ծնվել են տվյալ պետության տարածքում կամ դրանից դուրս, սակայն ծնողներից առնվազն մեկը տվյալ պետության քաղաքացի է,

- պաշտպանություն քաղաքացիությունը կորցնելուց կամ դրանից զրկելուց, եթե անձը դրա հետևանքով դառնում է քաղաքացիություն չունեցող,

- տարածքների հանձնման դեպքում ապաքաղաքացիության դեպքերից խուսափելու երաշխիքներ:

Քաղաքացիության և ձեռքբերումը, և՛ կորցնելը տեղի են ունենում, երբ անձը համապատասխանում է դրա համար սահմանված հիմնական չափանիշներին: Սրանով Կոնվենցիայի հեղինակներն ընդունել են, որ կարող են լինել քաղաքացիություն չունենալու առանձին և բացառիկ դեպքեր: Սակայն կարևորն այստեղ այն է, որ պետությունը, որի հետ անձը կապ ունի, պայմանավորված այդ պետության տարածքում ծնվելով, ծագմամբ կամ նախկինում այդ պետության քաղաքացիությունն ունենալով, պետք է գործադրի բոլոր ջանքերը՝ նվազագույնի հասցնելու ապաքաղաքացիության դեպքերը: Այդ ջանքերի էական մասն են մարդու իրավունքների հիմնարար սկզբունքները, ներառյալ ընթացակարգային երաշխիքների հասանելիությունը, խտրականության բացառումը և ընտանիքի միասնությունն ու վերամիավորումը: Քաղաքացիություն չունեցող անձանց հատուկ պաշտպանությունից են օգտվում ամուսինները և երեխաները: Բացի դրանից՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվա-

ծը նաև սահմանում է, որ քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի նվազագույն չափանիշը չպետք է սահմանափակում լինի այն պետությունների համար, որոնք կարող են և ցանկանում են ավելի մեծ աջակցություն ցուցաբերել քաղաքացիություն չունեցող անձանց:

Ի վերջո, 1961 թվականի Կոնվենցիան միջազգային այն փաստաթուղթն է, որը թույլ է տալիս շեշտադրումը միջազգային պաշտպանությունից ուղղել դեպի պետությունների կողմից տրամադրվող պաշտպանությունը:

1954 թվականի և 1961 թվականի կոնվենցիաների նպատակը ապաքաղաքացիության հիմնախնդրի հետևողական և մեթոդական բացահայտման սկիզբը դնելն էր: Սակայն որքան էլ տարօրինակ թվա, նշյալ միջազգային իրավական փաստաթղթերի մշակումից հետո այս խնդրի նկատմամբ հետաքրքրությունը հետզհետե նվազեց: Վերջին ժամանակներում ապաքաղաքացիության երևույթի նկատմամբ հետաքրքրությունը աճեց, սակայն դա հիմնականում պայմանավորված էր այնպիսի լայնածավալ փոփոխություններով, ինչպիսին է օրինակ՝ պետությունների փլուզումը, ԽՍՀՄ-ի անկումը:

Վերոնշյալ հիմնարար փաստաթղթերի մշակմանը զուգահեռ՝ միջազգային հանրությունը սկսել էր զարգացնել մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտը, որի հիմքում ընկած կարևորագույն փաստաթղթերից մեկը՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, քաղաքացիությունը սահմանեց որպես մարդու հիմնարար իրավունք, որը պատկանում է յուրաքանչյուրին⁷:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթներից ելնելով՝ հետագայում Միավորված ազգերի և տարածաշրջանային մարմինների մակարդակով ընդունված մարդու իրավունքների փաստաթղթերի մեծ մասը ևս պարունակում է քաղաքացիության իրավունքի վերաբերյալ դրույթներ: Դրանց շարքում են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը (հոդված 24), Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան (հոդված 7), որը սահմանում է յուրաքանչյուր երեխայի քաղաքացիություն ունենալու իրավունքը, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (հոդված 5), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (հոդված 9), ինչպես նաև շաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (հոդված 18):

Ապաքաղաքացիության կրճատմանն ուղղված վերջին ժամանակների կարևորագույն գործիք է 2014 թ. նոյեմբերի 4-ին ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից մեկնարկված *#Ես պատկանում եմ (#I Belong)* արշավը, որն Ապա-

⁷ Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948, դեկտեմբերի 10, հոդված 15:

քաղաքացիության վերացման մասին 2014-2024 թթ. գործողությունների համաշխարհային ծրագիր է: Այն ունի կոնկրետ նպատակներ, որոնց անհրաժեշտ է հասնել 10 տարվա ընթացքում: Դրանցից հիմնականը, անշուշտ, համաշխարհային մակարդակում ապաքաղաքացիության վերացումն է:

Համաշխարհային ծրագրով նախատեսված 10 գործողություններն են՝

Գործողություն 1. Լուծել քաղաքացիության հիմնական իրավիճակները:

Գործողություն 2. Ապահովել, որ ոչ մի երեխա չծնվի առանց քաղաքացիության:

Գործողություն 3. Հեռացնել գենդերային խտրականությունը քաղաքացիության մասին օրենքներից:

Գործողություն 4. Կանխել խտրական հիմքերով քաղաքացիության տրամադրումը մերժելու, կորցնելու կամ զրկելու դեպքերը:

Գործողություն 5. Կանխարգելել պետության իրավահաջորդության դեպքում քաղաքացիությունից զրկելու դեպքերը:

Գործողություն 6. Քաղաքացիություն չունեցող միգրանտներին տրամադրել պաշտպանության կարգավիճակ և նպաստել նրանց նատուրալիզացմանը:

Գործողություն 7. Ապահովել ծննդի գրանցումն ապաքաղաքացիության կանխարգելման նպատակով:

Գործողություն 8. Տրամադրել քաղաքացիության փաստաթղթեր նրանց, ովքեր ունեն դրա իրավունքը:

Գործողություն 9. Անդամակցել ՄԱԿ-ի ապաքաղաքացիության դեմ կոնվենցիաներին և վերացնել կոնվենցիաների վերապահումները:

Գործողություն 10. Բարելավել քաղաքացիություն չունեցող բնակչության որակական և քանակական տվյալների հավաքագրման մեխանիզմները⁸:

Գործողությունների ծրագրի համաձայն՝ պետություններին հորդորում են հանձն առնել ձեռնարկելու նշված 10 գործողություններից մեկը կամ մի քանիսը: Օրինակ՝ ՄԱԿ ՓԳՀ-ի գործադիր կոմիտեի 2019 թ. հոկտեմբերին տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ապաքաղաքացիության բարձրաստիճան սեկցիայում պետությունները պարտավորվել են իրականացնել թվարկված գործողություններից մեկը կամ մի քանիսը:

Հայաստանի Հանրապետությունը միացել է քննարկվող ոլորտի

⁸ Տե՛ս Ապաքաղաքացիության վերացման մասին 2014-2024 թթ. Գործողությունների համաշխարհային ծրագիրը, <https://www.unhcr.org/ibelong/global-action-plan-2014-2024>: Նաև՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), «Բարձրաստիճան պաշտոնյաների սեկցիա ապաքաղաքացիության վերաբերյալ: Արդյունքներ և կարևոր հարցեր» փաստաթուղթը (2020 թ. մայիս), էջ 20, <https://www.refworld.org/docid/5ec3e91b4.html>

հիմնական միջազգային փաստաթղթերին՝ 1954 թ. Կոնվենցիային և 1961 թ. Կոնվենցիային նույն օրը՝ 1994 թ. մայիսի 18-ին: Դրանով Հայաստանը պարտավորվել է ներպետական մակարդակում կատարել կոնվենցիաներով նախատեսված պահանջները՝ կրճատելու և կանխարգելելու ապաքաղաքացիությունը և նպաստելու քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությանը:

Հատկանշական է, որ ՄԱԿ ՓԳՀ գործադիր կոմիտեի 2019 թվականի հոկտեմբերի՝ վերը նշված հանդիպմանը Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլ պետությունների, պարտավորվել է իրականացնել որոշակի քայլեր՝ կանխարգելելու ապաքաղաքացիությունը և նպաստելու դրա կրճատմանը: Մասնավորապես, ՀՀ կառավարությունը հանձն է առել իրականացնել հետևյալ գործողությունները.

➤ Մինչև 2020 թվականը անցկացնել համապարփակ ուսումնասիրություն քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին ոլորտում առկա բացերը բացահայտելու, խնդիրները քարտեզագրելու և ոլորտի հիմնական մարտահրավերներին դիմագրավելու վերաբերյալ առաջարկություններ անելու նպատակով:

➤ Մինչև 2020 թվականը լրացուցիչ փոփոխություններ կատարել քաղաքացիության վերաբերյալ ազգային օրենսդրության այն դրույթներում, որոնք կարող են առաջացնել ապաքաղաքացիություն (այսինքն՝ հետամուտ լինել քաղաքացիության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենսդրական նախաձեռնությանը, որի նպատակն է երաշխիքներ ներդնել հրաժարման գործընթացում):

➤ Մինչև 2024 թվականը վերանայել քաղաքացիության վերաբերյալ ազգային օրենսդրությունը քաղաքացիություն չունեցող անձանց թվի կրճատման օրենսդրական հիմքեր սահմանելու և նրանց իրավունքների իրականացումը երաշխավորող համապատասխան մեխանիզմներ ապահովելու նպատակով⁹:

Նշվածից զատ՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է այլ պարտավորություններ ևս: Մասնավորապես, 2011 թվականին Ժնևում տեղի ունեցած բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպման ժամանակ կառավարությունը պարտավորվել է վերանայել ազգային օրենսդրությունը, որպեսզի այն համապատասխանեցնի իր միջազգային պարտավորություններին¹⁰:

2015 թվականի մայիսին ՄԱԿ ՓԳՀ աջակցությամբ կատարվել են փոփոխություններ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում, որոնց

⁹ Տե՛ս նաև ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), «Բարձրաստիճան պաշտոնյաների սեկցիա ապաքաղաքացիության վերաբերյալ... էջ 48, <https://www.refworld.org/docid/5ec3e91b4.html>

¹⁰ Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները և առաջարկությունները Հայաստանի Հանրապետությունում ապաքաղաքացիության վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ սատարման փաստաթուղթը (2020 թ. օգոստոս), էջ 2 <https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain?page=country&docid=5ff46f0a4&skip=0&publisher=UNHCR&coi=ARM&querysi=statelessness&searchin=fulltext&sort=date>

նպատակն է եղել ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել 1961 թ. Կոնվենցիային և քաղաքացիության ձեռքբերումն ու կորուստը կարգավորող համապատասխան իրավական նորմերին: Մասնավորապես

ա) երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ծնված երեխաները, որոնք այլապես կլինեին քաղաքացիություն չունեցող անձինք (այդ թվում՝ այն երեխաները, որոնց ծնողների քաղաքացիությունը հայտնի չէ), ստանան Հայաստանի քաղաքացիություն,

բ) ապահովել, որ ծնողների, խնամակալների կողմից քաղաքացիության կորստի կամ որդեգրման արդյունքում երեխաները հայաստանյան քաղաքացիությունը կորցնեն միայն այն դեպքում, երբ նրանք ունեն կամ ձեռք են բերում այլ քաղաքացիություն,

գ) ապահովել, որ կամավոր հրաժարվելու դեպքում անձը քաղաքացիությունը կորցնի միայն այն ժամանակ, երբ կա հավաստում այլ պետությունից այն մասին, որ խնդրո առարկա անձը դիմել է և իրավասու է ստանալու այդ երկրի քաղաքացիությունը,

դ) ապահովել, որ այն անձինք, որոնց քաղաքացիությունը դադարեցվել է կամավոր հրաժարվելու արդյունքում, կարողանան ինքնաբերաբար վերականգնել քաղաքացիությունը իրենց դիմումի հիման վրա,

ե) հնարավորություն նախատեսել օրենքով անաշխատունակ ճանաչված անձանց համար՝ հպատակագրման դիմում ներկայացնելու իրենց օրինական խնամակալի միջոցով,

զ) նախատեսել փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հեշտացված հպատակագրում՝ հանելով երեք տարվա օրինական բնակության և հայոց լեզվի հմտությունների ցուցադրման պահանջները,

է) նախատեսել հինգ տարվա ժամկետային սահմանափակում, որից հետո անձը չի կարող զրկվել քաղաքացիությունից այն փաստի հիման վրա, որ քաղաքացիությունը ձեռք է բերվել կեղծ տվյալների/փաստաթղթերի հիման վրա¹¹:

Բացի այդ՝ 2017 թվականի դեկտեմբերի 6-ին խառը ամուսնությունների առնչությամբ (մի ծնողը Հայաստանի քաղաքացի է, մյուսը՝ օտարերկրացի) լրացուցիչ փոփոխություններ են ընդունվել «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում: Դրանց նպատակն էր նախատեսել, որ միայն մեկ ծնողի համաձայնությունը բավարար է, որ երեխան ստանա Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե բնակվում է Հայաստանում: Նախկինում անհրաժեշտ էր երկու ծնողների համաձայնությունը: Մա գործնականում առաջացնում էր որոշակի դժվարություններ:

2021 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություն-

¹¹ Տե՛ս նույն տեղում:

ներ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որի նպատակն է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ազգությամբ հայերի պարզեցված կարգով ՀՀ քաղաքացիություն ստանալու իրավունքի լիարժեք իրացումը՝ մասնավորապես ազգությամբ հայերի կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումների քննարկման ժամկետը 6 ամսվա փոխարեն սահմանելով 3 ամիս:

Բացի այդ, օրենքի ընդունմամբ ՀՀ քաղաքացիություն ստացած անձինք իրավունք ունեն առաջին անգամ ՀՀ քաղաքացու անձնագրով փաստաթղթավորվել ինչպես Հայաստանի Հանրապետության լիազոր մարմին, այնպես էլ օտարերկրյա պետություններում գործող դեսպանություններ և հյուպատոսական հիմնարկներ դիմելու դեպքում:

Փոփոխությունը միտված է նաև ապահովելու 1961 թ. կոնվենցիայի պահանջները, բացառելու ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելուց հետո մինչև այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը ՀՀ նախկին քաղաքացու կողմից քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակում հայտնվելը և իր իրավունքներն իրացնելու համար առանց անձը հաստատող փաստաթղթի մնալու հնարավորությունը, ինչպես նաև կարգավորելու անձի քաղաքացիություն ստանալու և դադարեցնելու հարաբերություններում իրականացվող վարչարարության ընթացքում իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները¹²:

Օրենքի ընդունումը կարևոր առաջընթաց էր Հայաստանում ապաքաղաքացիության կրճատման և կանխարգելման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց փաստաթղթավորման տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, եթե պետություններն իրենց ազգային օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում կիրառեն ապաքաղաքացիության դեպքերի կանխմանն ուղղված արդյունավետ միջոցներ, ինչպես նաև համագործակցեն այլ պետությունների հետ (հնարավոր հակասություններից խուսափելու համար այն իրավիճակներում, երբ շոշափվում են անդրսահմանային շահերը), ապա ապաքաղաքացիության հետ կապված խնդիրների լուծումը բավականին կդյուրանա: Սակայն իրականում այն դեպքերում, երբ պետություններն ունեն համանման դրույթներ իրենց ազգային օրենսդրության մեջ, ապաքաղաքացիությունը կանխելուն ուղղված նրանց ջանքերը և նույնիսկ դրան ուղղված երկխոսությունն այլ պետությունների հետ խոչընդոտել կարող են հասկացությունների մեկնաբանման մեջ առկա տարբերությունները: Օրինակ՝ պետությունների մեծ մասն այժմ համաձայն է, որ քաղաքացիություն չունենալը միջազգային հետևանքների հանգեցնող խնդիր է, և որ պետք է ջանքեր գործադրել այն կանխարգելելու

¹² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=158942>:

համար, սակայն նրանք այսօր չունեն միասնական կարծիք ապաքաղաքացիությունը սահմանելու վերաբերյալ. որոշ պետություններ քաղաքացիություն չունեցող անձ համարում են այն անձին, որը իրավական կապ չունի ոչ մի պետության հետ, այլ երկրներ ասելով քաղաքացիություն չունեցող անձ հասկանում են նրան, ով հնարավորություն չունի որևէ երկրում քաղաքացիություն ստանալու, մյուսների կարծիքով՝ քաղաքացիություն չունեցող է այն անձը, որը չունի որևէ պետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր: Իրականում ինդիի լուծումը պայմանավորված չէ միայն միասնական մեկնաբանությամբ ու «ապաքաղաքացիություն» եզրույթի սահմանմամբ: Քաղաքական ցնցումների, տնտեսական վեճերի կամ, օրինակ, պատերազմների դեպքում պետությունների միջև այս ոլորտում երկխոսությունը կարող է ընդհանրապես անհնար լինել:

Ապաքաղաքացիության հիմնախնդիրների լուծման համար ձևավորված միջազգային իրավական համակարգի վերջնական նպատակն է երաշխավորել պետությունների պաշտպանությունը՝ առավելապես ապահովելով բոլոր մարդկանց քաղաքացիություն ունենալու իրավունքը ինչպես օրենսդրորեն, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում: Ապաքաղաքացիության վերաբերյալ կոնվենցիաները քաղաքացիություն չունենալը կանխարգելելու գործիքներ ու երկարաժամկետ լուծումներ տրամադրելու հիմնական մեխանիզմներն են, որոնք որոշում են, թե ում վրա է դրվում ապաքաղաքացիությունը կանխարգելելու պարտավորությունը: Դա տեղի է ունենում ինչպես իրավական կարգավիճակ սահմանելու միջոցով, ինչը հիմք է քաղաքացիության հնարավոր ձեռքբերման համար, այնպես էլ քաղաքացիություն չունենալու դեպքերը կանխարգելելու միջոցով, որն իր հերթին նվազեցնում է հարակից խնդիրների առաջացումը՝ քաղաքացիական իրավունքներից զրկելը, անկարգությունները և բնակչության բռնի տեղահանումը:

Որքան բարձր են տվյալ պետության քաղաքացիության հիմքով իրավական կապեր ունենալու երաշխիքները և որքան արդյունավետ է տվյալ պետության կողմից տրամադրվող պաշտպանությունը, այնքան քիչ հավանական կլինի տվյալ անձին միջազգային պաշտպանություն տրամադրելու անհրաժեշտությունը՝ որպես ազգային պաշտպանության բացակայության կամ ոչ բավարար լինելու համար փոխհատուցում:

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ ներկայացված հիմնախնդիրը հրատապ է ու լի է հետագայում ավելի մեծ ծավալներ ունենալու հավանություններով: ՄԱԿ-ի կոնվենցիաներով ու մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներով ապահովվում են ոլորտում գործելու համար անհրաժեշտ հիմքերն ու ուղեցույցները, ինչպես նաև ավելանում է պետությունների, միջազգային կառույցների, քաղաքացիական հասարակության և ակադեմիական շրջանակների հետաքրքրու-

թյունը ապաքաղաքացիության հիմնախնդրի վերաբերյալ, սակայն շատ աշխատանք կա դեռ անելու, և ժամացույցի սլաքը օրեցօր ավելի արագ է պտտվում աշխարհի՝ քաղաքացիություն չունեցող ավելի քան 15 միլիոն անձանց համար դեպի քաղաքացիություն տանող ուղի գտնելու համար¹³:

KNARIK VARDANYAN, SERGEY KAZINYAN – *Защита лиц без гражданства в международном праве и в законодательстве РА.* – В статье рассматриваются основные вопросы международной и внутригосударственной правовой базы, касающиеся защиты лиц без гражданства и сокращения числа лиц безгражданства.

Представлены основные международные и внутригосударственные правовые акты, направленные на регулирование вопросов, касающихся защиты лиц без гражданства, эффективность их применения и роль в обеспечении им необходимой защиты.

В целом реальная ситуация лиц без гражданства не всегда воспринимается правильно. Они в основном лишены всех прав, которые кажутся нам обычными, что делает их «невидимыми» с юридической точки зрения. Люди, которые физически существуют, но не признаются юридически.

Международные документы, направленные на сокращение безгражданства, устанавливают универсальные правовые рамки на основании которых при реализации своих нормативных актов государства должны создать эффективные внутренние механизмы для обеспечения безопасной и благополучной жизни лиц без гражданства, проживающих на их территории.

Ключевые слова: *Конвенция о статусе лиц без гражданства 1954 г., Конвенция о сокращении безгражданства 1961 г., международная защита апатридов, #Я принадлежу, УВКБ ООН, законодательство РА о гражданстве*

KNARIK VARDANYAN, SERGEY GHAZINYAN – *Protection of Stateless Persons in International Law and Legislation of the RA.* – The current article discusses the main issues in the international and national legal framework concerning the protection of stateless persons and the reduction of statelessness. The main international and domestic legal acts regulating the field and their effectiveness in detecting stateless persons and providing protection are presented.

The real situation concerning stateless persons is not always discussed correctly. They are mainly deprived of all rights that seem usual to us. This makes that “invisible” from the legal perspective. People, who physically exist, are not legally recognized.

International documents aimed at the decreasing statelessness establish the universal legal framework. While implementing their regulations, states should establish effective domestic mechanisms to ensure secure and prosperous life for stateless persons living in their territory.

Key words: *1954 Convention relating to the status of stateless people, 1961 Convention on the Reduction of Statelessness, International protection of apatrides, #I Belong, UNHCR, RA legislation on citizenship*

¹³ See The World’s Stateless report by the Institute on Statelessness and Inclusion (2014), <https://files.institutesi.org/worldsstateless.pdf>

ГОСУДАРСТВО В РЕАЛИЯХ МЕЖДУНАРОДНО-УГОЛОВНЫХ ДЕЯНИЙ

АЛЕКСАНДР МАНАСЯН

Прембула к теме. После внесения 1 октября 1946 года в Нюрнберге Международным военным трибуналом (далее МВТ или Трибунал) приговора в отношении руководящих лиц нацистской Германии и принятия в 1948 году¹ Конвенции ООН по предупреждению геноцида преступления против человечества не только не исключены из международной практики, но регулярным повторением становятся политической повседневностью. При этом субъекты подобных преступлений часто прикрываются пробелами международного права в том числе и по части института государства как возможного актора такого деяния. В теории вопрос упирается не только в пока неразрешенные вопросы международного права, но и политические мотивы, часто скрываемые в документах между строк и дискурсов по теме. Продолжавшиеся десятилетиями обсуждения проблемы в рамках Комиссии международного права (КМП)² в 1996 году увенчались завершением составления документа под названием «Проект Кодекса преступлений против мира и безопасности человечества» (док. ООН А/51/10)³. Но и он оставил открытым ключевой для международного правосудия вопрос об уголовной ответственности государств. Комиссия решила ограничиться рассмотрением вопросов индивидуальной ответственности за международно-преступные деяния. В 2001 году Комитет по правовым вопросам ООН (Шестой комитет), под эгидой которого работает КМП, Генеральной Ассамблеи ООН (далее - ГА ООН или ГА) представил по теме новый доклад (А/56/589 и Согг.1). На его основе ГА ООН приняла резолюцию 56/83⁴ «Ответственность государств за международно-противоправные деяния». Представленный КМП документ «Ответственность государств за международно-противоправные деяния», по которому была принята резолюция ГА ООН 56/83, существенно отличается от проекта Кодекса, в развитие которого он был выработан.

Мы поставили задачу проследить ход трансформации идеи о месте государства в реалиях международно-уголовных преступлений и выявить уязвимые стороны исследования темы в КМП. Статья нацелена на раскрытие пробелов международного права, служащих юридическим укрытием для совершающих тяжкие преступления против человечества государств. Таким способом действует Азербайджанская Республика (АР), которая осуществляет начатой турками и Азербайджанской Демократической Республикой (АДР), а затем продолженной Азербайджанской Советской Социалистической Республикой (АзССР) политику геноцида армянства Закавказья.

¹ https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/genocide.shtml

² КМП ООН непосредственно подотчетна учрежденной 11 декабря 1946 года Юридическому комитету (известен так же как Шестой комитет) ГА. В нашем тексте для названия «Комиссии международного права» параллельно будут употреблены также формы «КМП» и «Комиссия».

³ Если это будет не ушербно для текста, название документа будет использован коротко: Кодекс.

⁴ https://legal.un.org/ilc/publications/yearbooks/russian/ilc_2001_v1.pdff

Ключевые слова: нюрнбергские принципы, слабая транзитивность вины в коллективно содеянном преступлении, денацификация Германии как наказание Третьего рейха, мотивы не включения нюрнбергских принципов в ранг *jus cogens*, пробелы международного уголовного права, негосударственные субъекты международно-уголовного деяния, субъект - носитель международно-значимой силы

Субъект геноцидного деяния. В общей постановке рассмотрение темы в теории сталкивается с проблемой разделения вины между участниками коллективно совершенного тяжкого преступления (подсудными субъектами могут быть физические лица, спонтанно возникшие или организованные толпы, банды, организации, наконец, государство). Сложность вопроса в правовой феноменологии проявляется в определении меры ответственности с одной стороны государства и подчиненных ему учреждений и, с другой стороны, физических лиц - идеологов, организаторов, исполнителей и соучастников - в совместно содеянном акте. Интервал расходящихся мнений о разделении вины между ними широк, в начале и в конце которого стоят имена двух римлян - древнеримского историка первого века Корнелия Тацита, уверенного, что «там, где виновных много, не должно наказывать никого», и итальянского юриста XIX века Пеллегрини Росси, считавшего такое рассуждение глупым, так как виновные остаются безнаказанными. Сложность задачи очевидна уже во внутригосударственном судопроизводстве, к компетенции которого также могут оказаться разбирательства преступлений, представляющих опасность для мира и всеобщей безопасности. С серьезными коллизиями национальное правосудие не столкнется, если само государство, в ведении которого оказалось разбирательство дела, не сопричастно к преступлению. Но если оно само является субъектом уголовной ответственности по делу, то императив глобальной безопасности указывает на неизбежность учреждения наделенного соответствующими полномочиями наднационального института правосудия.

Сама идея такого института исторически возникла сравнительно недавно, когда стала очевидной опасность характерного для классической системы международных отношений принципа *jus ad bellum*. Первым в 1872 г., после окончания франко-прусской войны 1870-1871 гг., ее озвучил Президент Международного комитета красного креста (МККК) Гюстав Муанье, предложивший специальной Конвенцией учредить Международный судебный орган для наказания виновных, нарушивших Женевскую конвенцию от 1864 г. об улучшении положения больных и раненых в воюющих армиях. Затем эта идея была изложена русским юристом-международником графом Л. А. Комаровским, высказавшим убеждение, что основание такого суда лишь вопрос времени и что не только теоретические, а «гораздо более практические потребности вынудят государства

вступить на путь ее осуществления»⁵. Следующим шагом развития идеи наднационального института правосудия стала принятая в 1907 г. Гагская конвенция о законах и обычаях сухопутной войны, которой предусматривалось ответственность подписавших конвенцию государств за выплату убытков в случае нарушения ими установленных Конвенцией условий сухопутной войны.

